

648

3K16

4-37

1908

03 NOV 2009 *W*

3 K 16
4 - 37

ԿԱՐԼ ԿԱՌԻՑԿԻ

1912 թ.

Ր Ե Ֆ Ե Ր Ա Տ

ԿԱՐԼ ՄԱՐԿՍԻ ՄԱՍԻՆ

(Հայերէն թարգմ. Մարսի մահուան 25-ամեակի առիթով)

Բ. ԻՇԽԱՆԵԱՆԻ ԱՌԱՋԱԲԱՆՈՎ,
ԵՒ
ՄԱՐԿՍԻ ՆԿԱՐՈՎ


Ռուսերէնից թարգմ. ՆՍՍՆԵՄ

17584

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Էլէհրաուրտ զարան, ՀԵՐՄԱՆՍՏ, Ա. Պ. Եզիզաբեանի
1908

20 MAY 2013

648



ԿԱՐԼ ՄԱՐՔՍ



3320-2002

ԿԱՐԼ ՄԱՐԳՍԻ ՄԱՀԻԱՆ 25-ԱՄԵԱԿԸ

(1883 թ. մարտ 14—1908 թ. մարտի 14)

Ներկայ տարւոյ մարտի 14-ին (ն. տ., մեր հաշուով մարտի 1-ին) միջազգային համերաշխութեամբ սերտ դաշնակցած համաշխարհային գիտակից պրօլետարիատը նշանակալից վերլուշերով տօնում է իր Մեծ Մարդու մահւան 25-ամեակը: Ուղիղ տասը տարի յետոյ նա պիտի տօնէ նրա ծննդեան հարիւրամեակը (1818 թ. մայիսի 5—1918 թ. մայիսի 5):

Քսան և հինգ տարի առաջ, 1883 թ. մարտի 14-ին, ժամը 2-ին, 30 բողէին, կէսօրից յետոյ, Լօնդօնում, հերօպական մտքի ամենախոշոր հանճարներից մէկը կնքեց ընդմիշտ իր մահկառացուն: Առանց չարչարանքի և ներքին մաքառման, 65 տարեկան, երկարատե հիւանդ ալեզարդ ծերունին ննջում է յաւիտեան,— տալիս է իր վերջին լուռ հրաժեշտն այն աշխարհին, որի ծոցում նա ծնւեց, որի համար նա ապրեց և որի անունով նա անդուռ անդադրում կուեց ու մարտնչեց: Մի ամբողջ քառորդ դար է անցել այն օրից, երբ գիտական սօցիալիզմի հանճարեղ հիմնադիրը՝ մտաւոր աւանդ թողեց իր գաղափարակից մտերիներին և աշակերտներին պրօլետարական Մեծ Գործի շարունակութիւնը:

Քսան և հինգ տարի յետոյ, պրօլետարական շարժման յաջորդ սերունդը պատմական վերլուշութեան քաղցր ելեէջներով է նայում այն անցեալի վրայ, երբ իր նախնիքը դասակարգային կռիւ փշոտ ուղին էին հարթում՝ ապագայ սերնդի դիւրին յաղթանակների համար: 20-րդ դարի սկզբներում ամենաաւանդաբան չափերով իրականացել է այն մարտական հրաւերը, որ 19-րդ դարու կիսերին Մեծ Կօմունիստն ուղղել էր բոլոր երկրների պրօլետարներին:

Հին ինտերնացիօնալի հանճարեղ հիմնադիրն ու ղեկավարը շարժանագաւ հնի փլատակների վրայ կառուցեալ Նոր Պրօլետա-

րական Ինտերնացիօնալին. նա տեսաւ միայն իր փայփայած ձեռակերտի քայքայումը, օրգանական լուծումը: Սակայն դա մի կործանում չէր Ինտերնացիօնալի հիմքերի և ոչ էլ պարտութիւն նրա իդէալներին. դա միայն խախտումն էր Հին Պրօլետարական Ինտերնացիօնալի վերակեց ձեւերի, տեղի տալու համար Նոր Պրօլետարական Ինտերնացիօնալի կենսունակ, ժամանակակից ձեւերին: Ոչ ոք այնքան նուրբ հոտառութեամբ չէ հեռատեսիլ այդ հանգամանքը, որքան հէնց ինքը՝ Կարլ Մարքսը: Դեռ 1873 թ. սեպտեմբերի 27-ին (Ժընևի կօնգրեսից յետոյ) Մարքսը իր մի հետաքրքրական նամակում՝ ուղղած իր ընկեր Զօրգէին, ասում է ի միջի այլոց հետեւելով. «Եղելութիւնները (պատմա-քաղաքական, Բ. Խ.) և իրերի անխուսափելի դարգացումն ու կոնֆլիկտները պիտի ըստ-ինքեան նպաստեն Ինտերնացիօնալի վերաստեղծման քարոնորդւած ձեւով»:

Մի նախատեսում էր դա, որ բառացի ճշտութեամբ իրականացաւ 1889 թ., Մարքսի մահւանից վեց տարի յետոյ, երբ Փարիզում առաջին անգամ գումարւում է բոլոր երկրների սօցիալ-խառական կուսակցութիւնների միջազգային կօնգրեսը, որով հիմք է դրւում Նոր Ինտերնացիօնալին՝ ըստ Մարքսի, քարոնորդւած ձեւով:

Ուրեմն Մարքսի Ինտերնացիօնալը, հասունացնելով պրօլետարական շարժումը մինչև մի որոշ աստիճան և տալով նրան իր վախճանական ազատագրութեան և դասակարգային առօրեայ կռիւ բովանդակութիւնը, ինքը իր կազմակերպչական համազգային ձեւով անհրաժեշտօրէն տեղի տւեց աղային ձեւի, պահպանելով նոյն մարքսիստական-սօցիալիստական բովանդակութիւնը: Եւ եթէ Հին Ինտերնացիօնալը կոչւում էր Մարքսի Ինտերնացիօնալ՝ ըստ նրա անձնական ինիցիատիւի և ղեկավարութեան, ապա Նոր Ինտերնացիօնալը՝ իր յստակ պրօլետարական-դասակարգային իդէօլօգիայով և գիտական սօցիալիզմի առաջնորդող պրինցիպներով—պէտք է իրաւամբ կոչել մարքսիստական Ինտերնացիօնալ:

Պրօլետարական Նոր Ինտերնացիօնալն աճեց ու հասունացաւ վերջին տասնամեակում արագ թռիչքներով, ուժեղացաւ նրա միջազգային քաղաքական հմայքը, նա տարածեց իր ազդեցութիւնն ու ճիւղերը երկրագնդի բոլոր ծայրերը, ամփոփելով իր մէջ բազմաթիւ երկրներ ու ազգեր հինգ մայր ցամաքներից:

Եւ այսօր 25 երկրներ՝ քաղաքական-աշխարհագրական տերիտօրիաներ, իրենց պրօլետարական ներկայացուցչութեամբ,—արեւմուտքից արեւելք, հիւսիսից հարաւ,—համախմբւած են այն Ինտերնացիօնալի մէջ, որի գոյութեան գաղափարային հիմքերը և դործունէութեան առաջնորդող տենդենցները մարքսիստական-սօցիալիստական են: Այսօր հեռաւոր ասիացին, ամերիկացին, աֆրիկացին ու աւստրալիացին ընդօրինակելով և իւրացնելով եւրօպական կուլտուրան՝ կապիտալիստական նորագոյն քաղաքակրթութիւնը իր բազմագունի կողմերով, կշռւմ, տեղափոխւում են իրենց երկրները նաև Մարքս-Էնգելսի «Կօմունիստական մանիֆեստը», Մարքսի «Կապիտալը» և ընդօրինակւում, իւրացնում վերջիններիս վարդապետած աշխարհայեացքը, իրրի իդէօլօգիական բնանհրաժեշտ արտացոլում (րէֆլեքսիօն) կապիտալիստական-վարձուրանւորական արդիւնաբերակարգի:

Ուղիղ վերջին 25 տարւայ ընթացքում է, որ այնքան արագ թափով զարգացաւ եւրօպական ինդուստրիայի շատ ու շատ ճիւղերը և, որպէս դրա բնական հետեանք՝ մասսայօրէն աճեց եւրօպական պրօլետարիատը—ամենազգալի չափերով հէնց իրա՝ Մարքսի սեփական հայրենիքում, Գերմանիայում: Վերջին բառորդ դարի ընթացքում է, որ պրօլետարական-սօցիալիստական կուսակցութիւններն արեւմտեան եւրօպայի՝ այնքան ուժեղ որակաւորումներով և ցայտուն արտայայտութեամբ ամրապնդեցին իրենց ազգային իրականութեան մէջ, մասսայական խոշոր բնաւորութիւն ստացան ազգաբնակչութեան լայն խաւերում, արժէք ու ազդեցութիւն ձեռք բերին քաղաքական հորիզոնի վրայ. կարճ՝ նրանք զարձան ժամանակակից կենսունակ ու ծանրակշիռ ֆակտօրը ընդհանուր հասարակական կեանքի պատմական զարգացման պրօցեսում: Վերջին 25 տարւայ ընթացքում է, որ այնքան հսկայական ծաւալ ընդունեց տնտեսական հողի վրայ բանւորական շարժումը իր կօնկրետ արտայայտութիւններով, ուժեղ ու ներգործական չափերի հասաւ բանւորական դեմօկրատիայի գործնական քաղաքականութիւնը: Վերջին 25 տարւայ ընթացքում է, որ մարքսիզմի առաջնակարգ կօրիֆէյնները, պարագլուխները նորանոր գիտական հետազօտութիւններով աւելի ու աւելի խորացրին, ամրացրին և ժողովրդականացրին նրա տեսական հիմքերը սօցիալիստական մտածողութեան հորիզոնում: Ուստի պիտական աղանդները՝ բլանքիզմ, պրուդօնիզմ և այլն, քաղա-

քական կրետինիզմն ու սերվիլիզմը հետզհետէ չքանալով հրապարակից, տեղի են տալիս մարքսիստական սօցիալիզմի սրընթաց նւաճումներին, որոնցով նա տոն ու բովանդակութիւն տւեց առաջնակարգ երկրների սօցիալիստական կուսակցութիւնների տեսական մտածողութեան և գործնական արտայայտումներին—պըրօլետարական-դասակարգային բովանդակ քաղաքականութեան:

Ահա այդ դրական արդիւնների ընդհանուր յայտարարը, այդ ընտել տեղերի կօնկրետ մեծութիւնը կանգնած է այսօր մեր առջև, որպէս կենդանի մարմնացած յուշարձան կարլ Մարքսի: Յամառ ու տոկուն աշխատանքով վաստակած այդ պօզիտիւ արդիւնքներից իւրաքանչիւրը դալիս է այսօր մեզ վկայելու, որ դրանցից ամեն մէկը օրգանական շարունակութիւնն է այն Մեծ Գործի, որի հիմքը ձգել ու ամրացրել է պատմական կեանքում նման չեղած մտաւոր զոյգը—Մարքս-Էնգելսը:

Այն բազմակողմանի և բազմաբովանդակ ծառայութիւնը, որ ստացել է միջպզգային պրօլետարիատը մի հատիկ մարդուց, չէ տեսել բուրժուական աշխարհը իր վերածնունդի գրեշտանից մինչև օրս:

Մի մարդ, մի եզակի անհատ ամփոփել էր իր մէջ այն ամենը և արտադրել, հիմնաւորել ու կերպաւորել այն բոլորը, ինչ անհրաժեշտ էր մի ամբողջ դասակարգի պատմական ազատագրութեան համար:

Աշխատանքի բազմակողմանի ու մանրազնին բաժանման և կրթութեան ու զարգացման միակողմանիութեան ներկայ ժամանակում, էլ աւելի հմայք է ստանում Մարքսի ունիվերսալ գլուխը: Եւրօպայում, մասնաւոր Մարքսի հայրենիք Գերմանիայում, կաբինետի գիտնականը մի մեշտանին, մի ֆիլիսոփա քաղաքացի է հրապարակի վրայ, մի քաղաքական մանուկ է հասարակական կեանքում: Տւէք նրան իր հետախուզութեան և ուսումնասիրութեան բոլոր յարմարաւոր պարագաները, որպէս զի նա անհատնում է ներգրկւում տքնէ իր կաբինետում, ինքնամփոփէ իր ներքին աշխարհը. իսկ թէ ինչ է կատարւում իր կաբինետից դուրս, ինչ կարգեր են տիրում և ինչ կարգեր պիտի տիրեն հասարակական կեանքում, — դրանց մասին ոչ միայն նա չը գիտէ, չէ մտածում, այլև չի ուզում իմանալ ու մտածել: Եւ ընդհակառակը ամեն մի պրակտիկ գործիչ, քաղաքական-պարլամենտական խոշոր դէմք մի կատարեալ պրօֆան, տհաս է գիտական պօզի-

տիւ ուսումնասիրութեան սահմանում, կարինետային ինտենզիւ գրադմուքների մէջ:

Քաղաքականութիւն և գիտութիւն, պրակտիկ գործունէութիւն և տեսական մտածողութիւն,—սրանք տարրեր, ըստ երևույթի անհաշտ ու անալիստական կողմեր են, հակադրւած միմեանց դէմ, որոնցից իւրաքանչիւրն ունի իր ուրօյն ու զատւած ներկայացուցիչը:

Մարքսի անհատական մեծութեան ամենացայտուն առանձնայատկութիւնը կայանում է հէնց նրանում, որ նա հիասքանչ ներդաշնակութեամբ միացնում էր իր մէջ և՛ մէկը, և՛ միւսը: Նա և՛ քաղաքագետ էր, և՛ գիտնական, և՛ նրապարտի ու կաբինետի մարդ, և՛ վառվռուն յեղափոխական, կրակոտ ժուրնալիստ, և՛ սառն ու խորր մտածող, փիլիսոփայող, թէօրետիկ: Մի թէ՛ միւս ասպարէզում փայլեց Մարքսը իր տիպիչ, արտասովոր բնոյթազմերով, իր խոշոր արտայայտումներով: Եւ այդ տեսակէտից ոչ միայն 19-րդ դարը, այլ և առհասարակ մարդկային հասարակութեան պատմական անցեալը չի տալիս մեզ Մարքսին հաւասար երկրորդ օրիգինալ օրինակը: Մարքսի «Կապիտալ»-ը բաց արաւ տնտեսական գիտութիւնների մէջ մի նոբ և վերջին դարադուիւր: Նա իբրև տնտեսագետ՝ խորագնին վերլուծութեամբ և ամենանուրբ կրիտիկայով պատկերացրեց կապիտալիստական արդիւնաբերութեան գոյացման գաղտնիքը և դարգացման տեսլենցները: Նա մերկացրեց տիրապետող դասակարգի—բուրժուազիայի—քաղաքական տիրապետութեան էկօնօմիական հիմքերը, տնտեսական շահագործութեան ամբողջ մանւածապատ պրօցեսը, շահագործող ու շահագործուող դասակարգերի բեկեղային հակադրութիւնները արդիւնաբերական կեանքում:

Դա էր տնտեսալիտ Մարքսի հանձարեղ ծառայութիւնը պրօլետարիատին, իբրև տնտեսական կռիւղօրիայի:

Մարքսը դառաւ ու հիմնաւորեց մարդկային հասարակութեան պատմական զարգացման օրէնքը: Նա բաց արաւ այն առաջ-մղիչ ոյժերի և բէալ գործօնների ներգործութեան թափն ու արժէքը, որոնք տոն ու բովանդակութիւն են տալիս մարդկային պատմութեան, պայմանաւորում են սօցիալական կեանքի պրօգրեսը: Նա հիմնաւորեց հասարակութեան հակամարտ ոյժերի պատմական անտապօնիզմի—դասակարգային կռիւ ուսմունքը և պարզեց ու յանձնարարեց այն քաղաքական ուղին, որով ազատագրութեան պիտի ձգուէ «չորրորդ դասը»:

Դա էր սօցիալօգ, սօցիալ-փիլիսոփայ Մարքսի հանճարեղ ծառայութիւնը պրօլետարիատին, իբրեւ սօցիալական դասակարգի:

Մարքսը նուրբ հոտառութեամբ բնորոշեց դասակարգային կոււի այն յատուկ մեթօդը, որով միայն ենթարկւող ու շահագործւող դասակարգը կարող է հասնել բաղաքական և տնտեսական ազատագրութեան:

Դա էր յեղափոխական Մարքսի հանճարեղ ծառայութիւնը պրօլետարիատին, իբրեւ քաղաքական կուռղ ոյժի:

Նա երկաթէ կամքով, անընկճելի էներգիայով և անվեհեր ձգտումներով օժտւած մի մարդ էր, որին եւրօպական բէկեցիայի և բռնապետութեան բոլոր հալածանքներն ու ճնշումները, տարագրութեան դուր ծանրութիւնը, անտանելի զրկանքներն ու նեղութիւնները մազաչափ անգամ յետ չկասեցրին գիտական մոտածորութեան և յեղափոխական գործունէութեան մարտական դաշտից: Նա մի մարդ էր, որ 20 տարեկան հասակից սկսած ամենայն հաւատարմութեամբ հետեւել է Դանտէի նշանաբանին՝ «Հետեւիր ճանապարհիդ և թող մարդիկ խօսեն, ինչ ուզում են»:— Ինչ ուզում է, թող խօսէ ու գործէ կառավարական, բիւրօկրատական-ոստիկանական եւրօպան՝ իր գիտնական կաճառների պաշտօնական ներկայացուցիչներով, իր բուրժուական և ֆէօդալ-արիստօկրատական հասարակական կարծիքով, իր կօնվենցիօնել, աւանդական մօրալով,— փոյթ չէ Կարլ Մարքսի համար: Նա մի մարդ էր, գաղափարի մի անզուգական զինւոր, խրոխտ ու համարձակ, խիզախ ու անպարտելի, որ իր բոլոր ոյժերով ու մեծութեամբ նւիրւելով մարդկութեան ատւած ու արհամարած, ճնշւած ու շահագործւող դասակարգի սրբազան դատին, ամենայն խնամքով ու ճշտութեամբ ձեռակերտել է այդ դասակարգի— զրա հետ միասին և ընդհանուր մարդկային հասարակութեան— տղոտոպրօնեան գիտական շէնքը:

Ահա թէ ինչ էր Կարլ Մարքսը պրօլետարիատի համար:

Ահա թէ ինչու այսօր մէջազգային պրօլետարիատը փառայեղ ցնծութեամբ տօնում է Մարքսի մահւան 25-ամեակը, իբրեւ իր մեծ բարեկամի և ուսուցչի անմոռաց յիշատակ:

Բ. ԹԵՃԱՄԵՆԱՆ

1908 թ. մարտ 1:

ԻՆՖԵՐԵՏ ԿԱՐԼ ՄԱՐԿՍԻ ՄԱՍԻՆ

Կարլ Կաուցկու *)

Յարգելի ընկերներ! Այսօր մարտի 18-ի, այն օրւան նախօրէքն է, երբ սկսեց գերմանական առաջին յեղափոխութիւնը, որի ժամանակ գերմանական պրօլետարիատը յեղափոխական ինքնուրոյն դեր խաղաց: Բայց մարտի 18-ը բացառապէս գերմանական պատմութեան համար յիշատակելի թւական չէ: Այդ օրը մենք պատուում ենք նաեւ 1871 թւի Փարիզի յեղափոխութեան յիշատակը, իսկ դա միջազգային մի հանդէս է: Սակայն միայն յեղափոխութիւնը չէ, որ պատուում ենք այստեղ: Նախագահն արգէն յիշեց, որ այսօր մենք յարգելու ենք նաեւ մեր մեռածների, բոլոր նրանց յիշատակը, որոնք մեր մեծ գործի համար տանջւել ու կուել են, և որոնք ընկել են, մեծ մասամբ նոյնիսկ իրենց անունները չի թողնելով յետագայ սերունդներին: Նրանց ամենքին ենք պարտական, բոլորովին միեւնոյն է, առանց անուն թողնելու են նրանք մեռել, թէ նրանց անունները մինչև օրս էլ պատմութեան էջերում փայլում են: Բայց որքան էլ որ նրանց բոլորին երախտապարտ լինենք, այնուամենայնիւ չենք կարող ամենքին էլ յիշատակել մեր պատմութեան մէջ: Կան այնպիսի անուններ, որոնք առանձնապէս աչքի են ընկնում, և ուսումնասիրելով նրանց, մենք զրանով ուսումնասիրած կը լինենք և՛ մեր կուսակցութեան զարգացման պատմութիւնը, կամ աւելի խորը կրթւունք մեր շարժման մեծ տենդենցիան— ձգտումը: Եւ եթէ առանձին նշանակութիւն ենք տալիս որոշ անունների, այդ անում ենք ոչ թէ անձնաւորութեան պաշտամունքից զրդւած, ոչ թէ նրա համար, որ մտածում ենք իբր թէ նրանք մեր շարժման համար աւելի շատ բան են արել, քան համեմատաբար արել է ուրիշ մարտիկ-

*) Կարդացւած է 1906 թ. մարտ 17-ին:

ների հակայական բանակը,—այլ նրա համար, որ այդ անձնաւորութիւնների զարգացման ընթացքին հետեւելով, մենք ամենից լաւ կարող կը լինենք ուսումնասիրել մեր շարժման զարգացումը։ Այդպիսի անուններից չկալ և ոչ մէկը, որն այնքան լաւ բնորոշէր ամբողջ մեր մեծ շարժումը, որքան մեր առաջին ուսուցչի, Կարլ Մարքսի անունը։ Միայն այդ նպատակով, և ոչ թէ անձնաւորութեան պաշտամունքի իմաստով,—այսինքն, որպէս զի մօտորութեան թափանցենք մեր շարժման էութեան խորքը,—ես այսօր տիկից թափանցենք մեր շարժման էութեան կենսագրութիւնը։ Կաշխատեմ տալ ձեզ Կարլ Մարքսի համառօտ կենսագրութիւնը։

Կարլ Մարքսը ծնւեց 1818 թ. մայիսի 5-ին, Հոենսոսեան Կարլ Մարքսը ծնւեց 1818 թ. մայիսի 5-ին, Հոենսոսեան երկրամասի Տրիէր քաղաքում։ Հէնց այդ հոնգամանքն իսկ—նրա ծննդեան տեղը—մի ընդդիմադրական դէպք էր։ Հոենսոսեան երկիրը 1801 թ.ին գրաււած էր ֆրանսիացիների կողմից և յայտաւարւած ֆրանսիական տիրապետութիւն։ Նա այդպիսով ճաշակել էր ֆրանսիայի քաղաքական ազատութիւնը։ Յետագային աւանդութիւնները—տրագիգիաները, թէև Նապոլէօնի օրով աղճատւած, բայց այնուամենայնիւ նրանք ամենեւին չէին անյայտաւեց Պրուսիային, «արեւմտեան կալմիքների թագաւորութեանը»—ինչպէս Պրուսիային անւանում էր Ֆրէյլիգրատը,—նա զգաց այն մեծ տարբերութիւնը, որ կար արեւելա-պրուսսական ինքնութեան ըէթիմի և ֆրանսիական ըէթիմի միջև, և այդ օրւանից ամբողջ Հոենսոսեան երկիրը դարձաւ օպպօզիցիօն, ընդդիմադրական։ Բացի գրանից, ընդդիմադրական Մերձ Հոենսոսեան երկիրը այդ ժամանակ ամենախոշոր և զարգացած բուրժուազիայի, ամենազարգացած կապիտալիզմի հայրենիքն էր, որը՝ մի կողմից՝ յարաբերութեան մէջ էր գտնւում ֆրանսիայի, իսկ միւս կողմից՝ Անգլիայի հետ։ Ոչ մի տեղ ընդդիմադրական միտքն այնքան աւելցրած չէր պատւաստւում, որքան Մերձ Հոենսոսեան երկրում, որն երևան հանեց ամբողջ մի շարք քաղաքական ընդդիմադիր դրժիչներ։

1835-ին Մարքսը մտաւ Բօնի համալսարանը, իսկ 1836-ին փոխադրւեց Բերլին։ Հէնց այդ ժամանակամիջոցումն էլ բուրժուազիայի ընդդիմադրական տրամադրութիւնը սկսել էր աճել։ Բուրժուազիան նոր էր ազատւել այն լքումից, որը ֆրանսիական յեղափոխութիւնը ճնշելուց յետոյ էր առաջացել, և 1830 թ.ից Գերմանիայում էլ սկսեց յեղափոխական յուզմունքը,—փորձեր եղան

ոչնչացնելու հին ֆէօդալական (աւատական) և արսօլիտիստական (միահեծան իշխանութիւն) ըէթիմի մնացորդները։ Սկզբում այդ յեղափոխական գաղաւ փիլիսոփայութեան անվտանգ ասպարէզում, որտեղ ամենից առաջ փորձեցին հեղեղեան փիլիսոփայութիւնը ազատել պահպանողականութեան հետքերից և դարձնել յեղափոխական, հեռացնելով նրանից միեւնոյն ժամանակ նրա քրիստոնէութեան հետ ունեցած նմանողութեան—անալօգիայի բնաւորութիւնը։ Այդ շարժման գլխին կանգնած էր Փօյերրախը. նա գրաւեց և Մարքսին։

Բերլինում Մարքսն ընկաւ երիտասարդութեան մի այնպիսի շրջան, որը նախկին հեղինակութիւններից—ալտօրիտետներից և ոչ մէկին էլ չէր ընդունում։ Մաքս Շտիրներ, Բրունօ-Բաուէր և Մարքսն մանաւանդ խիստ էին յափշտակւած այդ հոռանքով։ Արդէն այդ օրւանից նկատելի էր, թէ ինչ յուզմունք ու յոյզեր էին ապրում նրա մէջ. երբ կարդում ես այդ միջոցներում նրա՝ իր հօրն ուղղած նամակները, ուղղակի ապշում ես, թէ ինչպէս նա ոչ մի բանով չէր բաւականանում, ինչպէս նա ամենուրեք ուղում էր գտնել ու հաստատել գիտական մի նոր բացում, թէ ինչպէս նա աւելի և աւելի խորն էր թափանցում իրերի էութեան մէջ ու անդադար ձգտում դէպ առաջ։ Քանի գտնում, նա հետըհետէ թողնում էր, իր գոյութիւնն ապահովող, մի որեւէ մասնագիտութիւն ուսումնասիրելու միտքը։ Նա աւելի ու աւելի դառնում էր մի յեղափոխական մարտիկ, մաքառող։ Հօրը մեծ դժարութեամբ յաջողեց հարկադրել նրան՝ 1841 թ.ին դօկտօրութեան ըննութիւն տալու և փորձելու՝ Բօնի համալսարանում պրիվատ-դօցենտի պաշտօն ստանալ։ Բայց Մարքսը ժամանակին մտադրութիւնը փոխեց, հասկանալով, թէ ինչ գերի է դատապարտւած գերմանական պրօֆեսսօրը. նա համոզւեց, որ մի այդպիսի պայքարող, ինչպիսին ինքն էր, կատարելապէս անհամապատասխան է գերմանական համալսարանի պրօֆեսսօրութեան գերու։ Դա նրա համար աւելի պարզ դառաւ, շնորհիւ իր ընկերոջ Բրունօ-Բաուէրի վիճակին, որն այդ միջոցին Բօնի համալսարանում պրիվատ-դօցենտ էր և անդադար անախորժութիւններ էր ունենում աստածաբանական ֆակուլտետի հետ, որի պատճառով էլ իշխանութիւնն հեռացրեց նրան իր պաշտօնից։ Մարքսը մտածեց, որ իրա համար, որպէս յեղափոխական մարտիկի, գոյութիւն ունի մի այլ,

աւելի համապատասխան պրօֆեսիա—զբաղմունք, քան պրօֆեսսօրութիւնը—ժուրնալիստի պրօֆեսիան: Հէնց այդ ժամանակնեւրին էր, որ Հռենոսեան երկրում հիմուկց մի նոր թերթ, որի շուրջը համախմբուեցին գերմանական դեմօկրատիայի ամենալաւ տարբերը: Դա—«Հռենոսեան լրագիրն» էր («Rheinische Zeitung»), որին աշխատակցում էին նաև սօցիալիստական տարրերը: Այդ միջոցին դեռ ոչ մի վիճ գոյութիւն չուներ՝ բուրժուական տարրերի և բուրժուական դեմօկրատիայի միջև: Նախ Մարքսը մտաւ «Հռենոսեան լրագրի» աշխատակիցների կազմի մէջ, իսկ յետոյ դարձաւ թերթի խմբագիրներից մէկը, և 24 տարեկան Մարքսը մի այնպիսի տաղանդ երևան հանեց, որ շատ շուտով խմբագրութեան մէջ ղեկավարող դեր սկսեց խաղալ:

Բայց նա շուտով հասկացաւ, որ ժամանակակից մի թերթ դեկավրելու համար, անբաւարար էին նրա ունեցած պատրաստութիւնն ու գիտութիւնը: Նա փիլիսօփայական կամ, արտայայտւելով ժամանակակից լեզուով, էտիկօ-էստետիկական (բարոյագեղագիտական) կրթութիւն էր ստացել: Նա գիտակցեց, որ դա քիչ է, որ բոլոր հարցերը վճռելու համար՝ դեռ բաւական չէ միայն նեւ ընչեւած լինել փառայեղ մտքերով և ունենալ դայրոյթի պաֆօս—խանդ, այլ հարկաւոր է լուրջ պատրաստութիւն ունենալ քաղաքա-տնտեսութիւնից ու պատմութիւնից: Այդ բանը բացայայտ դառաւ նամանաւանդ նրա՝ «Allgemeine Zeitung»-ի հետ՝ սօցիալական քաղաքականութեան մասին՝ մղած բանակուի, և ապա՝ Հռենոսեան Լանդտակի՝ վառելափայտի խնդրի վերաբերմամբ՝ բրոնսած դիրքի քննադատութեան ժամանակ: Այդ միջոցին դեռ պահպանւած էր համայնական հողատիրութեան վերջին մնացորդը—անտառից ցախեր հաւաքելու իրաւունքը: Ահա այդ իրաւունքն էին ուզում խլել գիւղացիներից, համարելով դա անտառայափըշտակութիւն, և որպէս այդպիսին, նա դատարանի կողմից հալածւում էր: Հարկը հազարաւոր նոյնանման գանդատներ քննւում էին դատարաններում, առիթ տալով նաև տաք վիճաբանութիւնների՝ Լանդտագում: Այստեղ միջամտեց և՛ Մարքսը, որպէս խմբագիր «Հռենոսեան լրագրի», նա բռնեց գիւղացիների—հարստահարւածների ու անպաշտպանների կողմը: Նա բնագորար դգաց, որ այստեղ է նրա տեղը և անխնայ կշտամբեց այդ քստմեկի ջանքերը՝ խլել բանւորներից, գիւղացիներից ու մանր-հողատէրերից նրանց՝ հողատիրութեան վրայ ունեցած՝ իրաւունքի վերջին մնա-

ցորդը: Սակայն այդ բանակուիւր ցոյց տուեց, որ նրա գիտելիքներն անբաւարար են: Նա տեսաւ նոյնպէս, որ խմբագրական գործունէութիւնը չի տալիս նրան անհրաժեշտ ազատութիւնն ու հնարաւորութիւնը՝ ընդլայնելու այդ բանակուիւր, և նա գրեթէ ուրախութեամբ դիմաւորեց իր և թերթի հրատարակիչների միջև շատ տեղին ծագած անախորժութիւնը: Մարքսը թերթն այնպիսի ընդդիմադիր ոգով էր խմբագրում, որ կառավարութիւնը սպառնում էր փակել այն, եթէ նա չը մեղմացնէ իր լեզուն: Գերմանական լիբերալիզմն այն ժամանակ էլ գրեթէ նոյնքան թոյլ էր, որական այժմ: Երբ նա՝ լիբերալիզմը դգաց, որ իրեն վիճակւած է պարտութիւն կրել, նա այնպիսի խայտառակ կերպով տեղի տուեց ու ենթարկեց իրեն բաժին ընկած բախտին, որ երեւեպել անգամ չէ կարելի:

Մարքսը, ի հարկէ, մերժեց հրատարակիչների արած պահանջը՝ մեղմացնել իր յօդւածների տոնը, և դուրս եկաւ խմբագրական կազմից: Բայց հրատարակիչների այդ ուղորմելի հաճոյակատարութիւնը չ'օգնեց նրանց, ու մի քանի ամսից յետոյ այնուամենայնիւ թերթը փակեց: Մարքսը վերջապէս ազաւ դգաց իրեն: «Հռենոսեան լրագիրը» հիմուկ էր 1842 թւին, իսկ 1843-ի դարնանը Մարքսն արդէն հեռացել էր նրանից: Նա իր երիտասարդ կնոջ՝ Ժեննա ֆօն Վեստֆալինի հետ միասին, որի հետ ամուսնացել էր 1843 թւին, տեղափոխեց Փարիզ, յեղափոխութեան այն ժամանակւայ Մեքքան: Փարիզում նա ուսումնասիրեց բուրժուական քաղաքա-տնտեսութիւնն ու սօցիալիզմի թէօրիտիկներին: Նա անձնական ծանօթութիւն հաստատեց ինչպէս ֆրանսիական սօցիալիզմի ներկայացուցիչների, գլխաւորապէս այն միջոցում նշանաւոր Պրուդօնի, նոյնպէս և Փարիզում ապրող գերմանացի ականաւոր էմիգրանտների—գաղթականների հետ: Առանձնապէս ուշագրաւ էր նրա ծանօթութիւնը Հանրիխ-Հայնէի, իսկ առաւել ևս՝ Ֆրիդրիխ Էնգելսի հետ:

Շատ յաճախ Հայնէին համարում են միայն քնարերգու, տրամադրութիւնների արտայայտման մէջ մեծ նկարիչ, սրածիտ ֆելիէտօնիստ և հնարագէտ ու խայթող երգիծաբան: Բայց որ Հայնէն նաև մեծ մտածող փիլիսօփայ ու գիտնական էր—դա շատ քչերը գիտեն, նոյնիսկ ոչ-բոլոր մեր կուսակցական ընկերները: Ամեն մէկը, ով մօտիկից ճանաչել է Հանրիխ Հայնէին, միշտ խորին պատկառանքով է յիշում նրան, որպէս գիտնականի և մտա-


ծողի: Եւ միայն այն թեթեւ ձեւը, որով նա արտայայտում էր իր մտքերը, առիթ տւեց կարծելու, որ այդ ձեւի յետեւ, բացի խօսքերի թեթեւ բառախաղից, ուրիշ միտք չը կայ թագնաւած: Կարլ Մարքսը խորապէս յարգում էր Հանրիսն Հայնէին և միշտ ընդ-գծում, որ նրանից ինքը շատ բան է սովորել:

Առաւել կարեւոր էր Մարքսի ծանօթութիւնն Էնգելսի հետ: Դեռ «Հոնոստեան լրագիրը» խմբագրած ժամանակը նա ծանօթացաւ վերջինիս հետ, բայց ոչ-շատ մօտիկից: Միայն Փարիզում նրանց մէջ հաստատուեցին աւելի մտերմական յարաբերութիւններ: Եւ այդ օրւանից իսկ երեաց, թէ ճրքան այդ երկուսը հոգով մօ-տիկ էին միմեանց, թէ ինչպէս նրանք, բղխելով բոլորովին տարբեր ելակէտներից, միշտ յանգում էին միատեսակ եզրակա-ցութիւններին: Այդ ժամանակները՝ հենց Մարքսը Էնգելսից մի շարք կարեւոր ազդակներ ստացաւ: Էնգելսը Բարմենի գործա-րանատէրերից մէկի որդին էր: Նրա ծնողները հոգ էին տարել, որպէսզի նա ուսումնասիրէ տեխնիքական, քնագիտական և առե-տրական գիտութիւնները, իսկ իր փիլիսոփայական կրթութեան մասին հոգացել էր ինքը՝ Էնգելսը: Նրա հայրը գործարանատէր էր Մանչեստերում, այսինքն Անգլիայում, որտեղ կապիտալիզմն աւելի էր զարգացել, քան Ֆրանսիայում, որտեղ, նշանակում է, աւելի լաւ կարելի էր հետեւել նրա զարգացման բոլոր տեն-դենցներին, քան մի օրեւ է ուրիշ տեղ: Էնգելսն ոչ միայն կա-պիտալիզմի զարգացումն էր ուսումնասիրել այնտեղ, այլ նաև պրօլետարական մեծ շարժման առաջին ֆօրմը, չարտիստական շարժումը, որը 40-ական թւականների սկզբներում առանձնա-պէս ուժեղ էր արտայայտում: Այդ շարժումը, իր բնոյթով, աւելի արժատական, աւելի խորն էր, քան Ֆրանսիայի սօցիա-լիստական շարժումները: Վերջինները գեոևս չէին կարողացել իրենց վրայից դէն գցել մանր-բուրժուական կեղերը, որովհետեւ երկիրն էլ տնտեսապէս դեռ այնքան զարգացած չէր: Այնտեղ գոյութիւն ունէր երկու տեսակի սօցիալիզմ—բլանքիզմ ու պրու-դօնիզմը: Առաջինն անխախտ պահպանում էր մեծ յիզափոխու-թեան տրագիքիաները կամ, այլ խօսքով, եակօբինեան ուղ-ղութիւնը, և աշխատում էր վերջինիս տակտիկան՝ դարձնել պրօլետարիատի տակտիկա: Նա ձգտում էր, խիստ կենտրոնա-ցած և գաղտնի գործող կազմակերպութեան օգնութեամբ, յա-ջողակ դաւադրութեան ու ապստամբութեան միջոցով, ձեռք գը-

ցել քաղաքական տիրապետութիւնն միայն այն նպատակով, որ-պէսզի մի քանի հազար հոգու քաղաքական տիրապետութիւնից յետոյ, մտցնել սօցիալիստական կարգեր: Պրուդօնը, յիրաւի, լաւ էր հասկացել, թէ յաջողութեան ճրքան քիչ շանսեր կարող էր ունենալ մի այդպիսի տակտիկա այն ժամանակում: Սակայն, նա հակադիր տակտիկայի կողմնակից հանդիսացաւ միայն նը-րանով, որ լսել անգամ չէր ուզում՝ կառավարութեան գէմ մըղ-ւած կռիւն՝ պրօլետարիատի ինքնուրոյն մասնակցութեան մասին: Նա անտիճանարար նոյնիսկ բոլորովին դուրս գցեց այդ կռիւը. փորձելով խաղաղ ճանապարհով, պրօլետարիատի կազմակերպ-ման օգնութեամբ, իրականացնել նրա ազատագրումը: Նա յոյս ունէր, որ պրօլետարիատը, արտելական սկզբունքների վրայ զանազան ձեռնարկութիւններ հիմնելով, կը կարողանայ տպա-հովացնել իր յետագայ գոյութիւնը, որը—իր էութեամբ—ոչին-չով չէր տարբերում մանր-բուրժուականից:

Կատարելապէս այլ էր չարտիստական շարժումն Անգլի-այում: Սա՝ յենւելով ամբողջ պրօլետարիատի վրայ, ուզում էր նրան կազմակերպել ինքնուրոյն քաղաքական կուսակցութեան մէջ՝ քաղաքական տիրապետութիւնը գրաւելու նպատակով, որպէս-զի ապագայում կարելի լինի գործադրել այդ իշխանութիւնը, յօգուտ պրօլետարիատի շահերի: Այդ ամենը կատարում էր, իհարկէ, քնազգաբար. չարտիստների նպատակները գեոևս սօցիա-լիստական չէին: Սակայն նրանք պարզ, որոշ հասկացողութիւն ունէին բնդհանուր բնորոշական իրաւունքի, տաս-ժամեայ բանւորական օրւայ պահանջի մասին: Եւ այդ շարժումը, յա-մենայն գէպս, պարունակում էր իր մէջ ժամանակակից դասա-կարգային կռիւ գրեթէ բոլոր տարբեր, ուստի և ֆրանսիական սօ-ցիալիստական շարժումից նա աւելի բարձր էր կանգնած: Չարտիս-տական շարժման հետ ունեցած անմիջական իր ծանօթու-թիւնը՝ Էնգելսը հաղորդում էր Մարքսին և դրանով ազդում նրա վրայ: Էնգելսը միշտ աչքի էր բնկնում իր համեմատութեամբ. Մարքսին միշտ նա բարձր էր դասում, երկրորդական տեղ տալով իրեն: Եւ դա իրօք որ այդպէս էր: Մարքսն աւելի խորը մտածող էր և ունէր փիլիսոփայական ու քննադատական միտք: Էնգելսն իր եզրակացութիւնների մէջ շատ շտապ էր ու անկշռադատ. Մարքսը նրան հաղորդող շարքով է շատ սխալ քայլերից: Բայց ոչ միշտ Էնգելսն էր լինում սովորողը, ստա-

3320-2002



յողը: Մարքսն էլ իր հերթին շատ բան սովորեց Էնգելսից: Սա էր, որ Մարքսին ծանօթացրեց անգլիական սոցիալիզմի հետ: Նրանք առհասարակ զարմանալի կերպով իրար լրացնում էին, փոխադարձաբար բեղմնաւորելով միմեանց մտքերը. և մտքերի ու իդէաների այդ փոխադարձ փոխանակումից էլ հէնց ծնեց պատմական մատերիալիզմը: Այդ թէօրիան, իր հիմնական գծերով, աւարտեց 1845 թւին: Բայց այդ ժամանակ նրանք ոչ թէ Փարիզում, այլ Բրիւսսելում էին: Մարքսը միայն գիտութեան մարդ չէր, նա չէր կարող զբաղւել գիտութեամբ, իսէր գիտութեան. նա մի մարտիկ, մի մաքառող էր և չէր կարող սահմանափակւել միմիայն գիտական ու գրական գործունէութեամբ և հրաժարւել քաղաքական կուր մէջ ակտիւ մասնակցութիւն ունենալուց: Նա գեռ Փարիզումն էր փորձել գործնականապէս արտայայտել, տարածելով իր իդէաները պրօպագանդիստական գործունէութեան միջոցով: Այդ նպատակով էլ նա՝ Արնօլդ Բուգէի հետ՝ հիմնեց «Գերմանա-Ֆրանսիական միամեայ հանդէս» անունով ժուրնալը, բայց այդ թերթի միայն մի համարը լոյս տեսաւ: Նա լայն շափերով չը տարածւեց և ստիպւած եղաւ դադարեցնել իր գոյութիւնը: Բացի այդ ժուրնալից, Մարքսը գործում էր բանւորների միութեան մէջ և յօդւածներ գրում Փարիզում հրատարակւող «Worwärts» («Յառաջ») թերթի համար: Սկզբում սա տեղական սովորական թերթիկներից մին էր և իր ձևով առհասարակ չէր տարբերւում տեղական գերմանական ուրիշ լրագրներից, բայց գերմանական կառավարութիւնը մի առանձին թերահաւատութեամբ ու թշնամաբար էր վերաբերւում այն բոլորին, ինչ որ կատարւում էր Փարիզում, և այդ անգլիացի թերթի մոտքը Գերմանիա՝ արգելեց: Այն ժամանակ թերթի հրատարակիչ՝ Բերնշտէյնը, բնաւորութիւնից զուրկ մի մարդ, զայրացաւ և իր թերթը գրեց էմիգրանտների տրամադրութեան տակ, որոնք ուրախութեամբ օգտւեցին առիթից: Եւ ահա այդ օրւանից էլ Մարքսը սկսեց գրել այնտեղ, թէև ոչ այնքան էլ շատ. հաստատապէս յայտնի է նրան՝ այդ թերթի համար գրած՝ մի յօդւածի մասին, բայց հաւանական է, որ նրա գրչին պատկանող էլիյօդւածներ լինեն: Ինչքան արժատական էր դառնում թերթը, այնքան աւելի կատաղում էր պրոլետական կառավարութիւնը և հրնարներ փնտրում նրան փակելու: Բայց որովհետև Ֆրանսիայում գոյութիւն ունեցող այն ժամանակւայ օրէնքներով թերթը փակել

չէր կարելի, ուստի և պրոլետական կառավարութիւնն ուրիշ միջոցի գիմեց. նա աշխատեց Ֆրանսիական կառավարութեանն առիթ ու հնարաւորութիւն տալ՝ արտաքսելու Ֆրանսիայից իրեն անհաճելի գրականագէտներին, որոնց թւում և Մարքսին: Եւ Ֆրանսիական ազատամիտ կառավարութիւնը, Գիզօյի միւնիստրաթիւնը, այդ ծառայութիւնը մատուցեց պրոլետական կառավարութեանը. 1844 թւին Ֆրանսիական սահմաններից դուրս քշեց, ի միջի այլոց, նաև Մարքսը: Նա տեղափոխեց Բրիւսսել, որտեղ կրկին հանդիպեցին ինքն ու Էնգելսը, և նրանք միասին ձեռնարկեցին քննադատաբար դարգացնել պատմութեան մատերիալիստական հակացողութեան իրենց գիտական նոր տեսակէտը, հակառակ դիրք բռնելով դէպ իրենց նախկին բարեկամները, որոնց հետ հարկադրւած եղան խզել իրենց իդէական կապերը: Դա ամենից առաջ արտայայտեց նրանց հրատարակած՝ «Սուրբ ընտանիք» անունով՝ սատիրա-երգիծաբանական բրօշուրի մէջ, որտեղ նրանք անխնայ ծաղրում էին Բաուէր եղբայրներին: Ապա նրանք գրեցին մի մեծածաւալ հատոր՝ «Ժակական սոցիալիզմի» մասին, — դա՛ ներկայ «էդիկօ-էստետիկական սոցիալիզմի» նման մի բան էր, — և նրան ամենախիստ քննադատութեան ենթարկեցին: Սակայն նրանց չը յաջուեց տպագրել տալ այդ գիրքը, իսկ յետոս և կորցրեց ամեն մի հետաքրքրութիւն, որովհետև «խակական սոցիալիզմը» այդ ժամանակամիջոցում կատարեալ պարտութիւն կրեց ու չքացաւ հորիզոնից:

Վերջապէս Մարքսը 1847 թւին լոյս ընծայեց իր հեղինակութիւնը Պրուզօնի դէմ — «Փիլիսօփայութեան աղքատութիւնը» անունով: Այդ հեղինակութեան մէջ նա խիստ քննադատում է Ֆրանսիական սոցիալիզմի առաջնորդին ու ահանաւոր ներկայացուցչին: Նա ապացուցանում է, թէ սրբան մանր-բուրժուական է Ֆրանսիական սոցիալիզմը, թէ ինչպէս նա ձգտում է հաշտեցնել բանւոր դասակարգը գոյութիւն ունեցող հասարակական կարգերի հետ, թէ ինչպէս նա ուզում է վերացնել բուրժուական կարգերի միայն վատ կողմերը: Մարքսն ապացուցանում է, որ կապիտալիստական հասարակութեան վատ կողմերն անբաժանելի են նրա լաւ կողմերից, որ վերացնել վատ կողմերը, կարելի է միայն ամբողջ բուրժուական հասարակական կարգի ոչնչացմամբ: Միևնոյն ժամանակ նա՝ հակառակ Պրուզօնի խաղաղասէր սոցիալիզմի՝ պնդում է, որ միայն պրօլետարիատի կուր կազ-

մակերպումով կարելի է ազատագրել նրան, և որ միայն պրօֆեսսիօնալ միութիւնների մէջ պրօլետարիատի խաղաղ կազմակերպումով՝ չի կարելի հասնել նպատակին, որ բաղաձայն և պրօֆեսսիօնալ կազմակերպութիւնների միաձուլի մղած կռուին է, որ պիտի հնարաւոր դառնայ պրօլետարիատի ազատագրումը:

Բայցի այդ տեսական (թէօրիական) աշխատանքից, Մարքսն ու Էնգելսը զրադած էին առաւելապէս պրակտիկական գործունէութեամբ: Նրանք Բրիւսսէլում հիմնեցին մի բանւորական միութիւն: Այդտեղ Մարքսն հռչակաւոր ճառեր էր արտասանում վարձու աշխատանքի և կապիտալի մասին. իսկ այդ ճառերն իրենց մէջ պարունակում էին հէնց այն մտքերի սաղմերը, որոնք յետագայում ծառայեցին որպէս հիմք նրա երեքհատորեայ հեղինակութեան—Վալիսալի: Նոյն ճառերը յետոյ լոյս տեսան առանձին բրձիւրով և հակիրճ ու սեղմած ձևով: Ով որ անկարող է կարդալ նրա «Կապիտալը», նա թող կարգայ գտնէ այդ բրձիւրը, որտեղ բնութում ու վերլուծում են կապիտալի ու վարձու աշխատանքի վերաբերեալ հարցերի այն ամենակարեւոր կէտերը, որոնք առնչութիւն ունեն պրօլետարիատի հետ:

Մարքսն ու Էնգելսը իրենց ձեռքը գցեցին «Բրիւսսելի գերմանական լրագիրը», որի օգնութեամբ նրանք աշխատում էին ազգեցութիւն գործել ինչպէս Բրիւսսելի, նոյնպէս և գերմանական բանւորների վրայ, գաղտնի ճանապարհներով թերթը մտցնելով Գերմանիա և անլեզալ տարածելով այնտեղ: Բայց ամենից կարեւորը՝ նրանց ու Անգլիայի «Կոմմունիստների» միութեան մէջ հաստատւած կապն էր: Վերջինս սկզբում կոչւում էր «Արգաբա դատների Միութիւն» և յարում էր բլանքիզմին: Երբ 1839 թւին բլանքիստներն ապստամբութեան փորձ արին ու պարտութիւն կրեցին, Միութիւնը հարկադրւած եղաւ իր կենտրոնը տեղափոխել Անգլիա: Այստեղ նա աւելի սերտ շփում ունեցաւ շարտիզի հետ, որի հետեանքն եղաւ այն, որ նրա զեկավարների աշխարհահայեացքների թէօրիական հիմնաւորումը կատարելապէս այլ բնւորութիւն ստացաւ: Նրանք իւրացրին շարտիստական աշխարհահայեացքը, ծանօթացան զասակարգային կռիւ հետ և այդպիսով յանգան հէնց այն աշխարհահայեացքին, որը Մարքսն ու Էնգելսը զարգացրել էին իրենց հեղինակութիւնների մէջ: Նրանք նախ և առաջ դիմեցին Մարքսին ու Էնգելսին հարցնելով, թէ արդեօք համաձայն են սրանք մտնելու «Արգաբադատների

Միութեան» մէջ, յայտնելով միեւնոյն ժամանակ, որ Միութիւնը կանգնած է նոյն տեսակէտի վրայ, ինչի վրայ որ կանգնած են Մարքսն ու Էնգելսը: 1847 թ. Լօնդօնի կօնգրէսն աւելի սերտ յարաբերութիւն ստեղծեց նրանց մէջ: 1847 թ. նոյեմբերին կայացաւ երկրորդ համագումարը, որից յետոյ այդ յարաբերութիւնները դարձան տեսական: Միութիւնն այդ օրւանից վերակոչւեց «Կոմմունիստների Միութիւն», մշակեց իր համար կազմակերպութեան այլ ձև, զարգեցրեց զաւարիւրների խումբ լինելուց և դառնալով պրօլարատիկներին ընկերութիւն:

Մարքսին ու Էնգելսին յանձնարարեց գրել մի մանիֆեստ, որտեղ մեկնաբանւած լինէին Միութեան աշխարհայեացքների հիմնական կէտերը: 1848 թ. այդ մանիֆեստն արդէն տպագրւած էր—գա ձեղ բոլորից յայտնի Կոմմունիստական Մանիֆեստն է: Կարիք չը կայ, որ ես մանրամասն կանգ առնեմ նրա վրայ, որովհետեւ, կարծում եմ, որ նա բոլորից էլ լաւ է ծանօթ: Կոմմունիստական Մանիֆեստն ընդգրկում է այն բոլոր տարրերը, որոնք մտցրւած էին բանւորական շարժման մէջ Մարքսի ու Էնգելսի նախորդների կողմից: Բայց մինչև Կոմմունիստական Մանիֆեստի լոյս տեսնելը, այդ տարրերը՝ անջատ-անջատ գոյութիւն ունենալով, ոչ մի ոյժ չէին ներկայացնում, այլ միայն փոխադարձաբար խանգարում և արգելք էին հանդիսանում միմեանց: Դա՛ մի կողմից՝ ուսուցիական սօցիալիզմն էր, միւս կողմից՝ բանւորական շարժումը: Մինչև այդ ժամանակը բանւորական շարժման վարիչները ֆիլանտրօպները—մարդասէրներն էին, որոնք բանւորների հետ ոչ մի կապ չուէին: Նրանք յոյս ունէին գտնել բարեգործ թագաւորներ և լուսաւորւած կառավարութիւններ, որոնց բարեհաճ աջակցութեամբն էլ կարողանային ստեղծել հասարակական մի այնպիսի կարգ, որով հնարաւոր լինէր ազատագրել պրօլետարիատը: Այդ ուսուցիստներն իսկական բանւորական շարժման մասին լսել անգամ չէին կամենում, վախենալով, որ այդ շարժումը կարող է միայն խրոնեցնել թագաւորներին ու բուրժուազիային, որոնք զրա պատճառով էլ բեֆօրմներ անելու ամեն մի ցանկութիւն կը կորցնէին: Միւս կողմից, հէնց իրենք՝ բանւորները խիստ թերահաւատութեամբ էին վերաբերում դէպի ուսուցիչմը: Նրանք հաւատ չէին ընծայում ֆիլանտրօպներին, չէին հաւատում նրանց բարեացակամութեանն ու բարի ցանկութիւններին, և նոյնիսկ այն զէպրում, երբ հաւատում էլ էին նրանց բարեա-

ցակամութեանը, նրանք այնուամենայնիւ չէին վստահանում զբանց ուժին ու ընդունակութիւններին՝ կեանքի մէջ իրազործելու համար իրենց ցանկութիւնները: Բայց ինքը՝ լանւորական շարժումն էլ չունէր որոշակի նպատակ, որին նա կարողանար ձգտել. նա կուրօրէն, խարխաբելով էր ձանապարհ փնտռում, և չունէր բաւարար ոյժ, որպէսզի առօրեայ կարիքներից հեռու գնար ու գնէր իրեն այնպիսի նպատակ, որի շուրջը կարելի լինէր համախմբել լայն մասսաներ:

Բացի այդ, նկատուեմ էր և ներհակութիւն՝ քաղաքական ու տնտեսական շարժման միջև, ինչպէս դա արտայայտուեմ էր նաև բլանքիզմի և պրոլետարիատի հակադրութեան մէջ: Այդ միակողմանիութիւնն հարկաւոր էր հեռացնել: Ո՛չ միակողմանի քաղաքական կոիւր, ո՛չ պրոֆեսսիօնալ կազմակերպութիւնը, զբաժնից և ո՛չ մէկն էլ առանձին-առանձին չի կարող իրականացնել պրօլետարիատի ազատագրումը: Միայն այն ժամանակ, երբ այդ երկուսն էլ միացած են, հնարաւոր կը լինի ունենալ անհրաժեշտ ուժը՝ բանւոր դասակարգ վերջնականապէս ազատագրելու համար:

Կօմմունիստական Մանիֆեստի մէջ այդ տարրերը միացած են մի ամբողջութեան մէջ: Դա սօցիալիզմն է, և ոչ թէ բուրժուական մարդասիրութիւնը: Նա բանւորական շարժման աւելի լայն նպատակ է առաջադրում, քան բանւորական օրէնսդրութիւնը, կամ ընտրողական իրաւունքի ձեռք բերելը: Մանիֆեստն ոչ միայն որպէս ամբողջութիւն միացնում է սօցիալիզմն ու բանւորական շարժումը, այլ նա նաև հիմնաւորում է՝ քաղաքական և տնտեսական կուլի մի անբաժանելի ամբողջութիւն լինելը: Եւ դրա շնորհիւ է, որ բանւորական շարժումը մի այնպիսի ոյժ ու թափ ստացաւ, որը մինչև օրս էլ կարելիութիւն է տալիս նրան՝ յաղթական քայլերով առաջ ընթանալու:

Ի հարկէ, այդ ժամանակուս կօմմունիստական Մանիֆեստը գեռ շատ քչերի համար կարող էր հասկանալի լինել. նա մնաց մի թղթի կտոր և շատ էլ մեծ ազդեցութիւն չունեցաւ իրերի զարգացման պատմական ընթացքի վրայ: Բայց այն յեղափոխութիւնը, որ Կօմմունիստական Մանիֆեստն էր նախատեսել, իսկապէս շուտով, — Մանիֆեստի լոյս տեսնելուց ընդամենը երեք շաբաթ յետոյ, վրայ հասաւ. դա Փարիզի փետրուարեան յեղափոխութիւնն էր: Մարքսն ու Էնգելսը իսկոյն և եթ ուղեւորւեցին Փարիզ. զրան բաւական նպաստեց նաև Բրիւսսելի ոստի-

կանութիւնը, որը սպառնում էր քշել նրանց Բէլգիայի սահմաններից: Շատ շուտով, զբանից յետոյ, յեղափոխութիւնը բռնկեց նաև Գերմանիայում, և Մարքսն ու Էնգելսը, ինչպէս նաև Կօմմունիստական Միութեան միւս անդամները, շտապեցին Գերմանիա:

Բայց պրօլետարիատը դեռ ևս խիստ թոյլ էր, որպէսզի կարողանար հիմնել իր սեփական՝ սօցիալիստական կուսակցութիւնը. նա գործել կարող էր միայն որպէս այն ժամանակայ դեմօկրատիայի ձախ թեւը: Մերձ հեռնոսեան շրջանում այդ միջոցներին դեմօկրատիան հիմնեց «Նոր Հոննոսեան լրագիրը» (Neue Rheinische Zeitung): Շուտով Մարքսն ու Էնգելսը տիրապետեցին այդ թերթին, որը արտաբնական դեմօկրատական մի լրագիր էր, բայց փաստօրէն նա պաշտպանում էր Կօմմունիստական Մանիֆեստի հիմնական սկզբունքները:

Երբ այժմ հարց են տալիս, թէ ինչպէս պէտք է սկզբունքով խմբագրել ամենօրեայ մի թերթ, այդ հարցնողներին ամենալաւ պատասխանն է՝ մատնանշել «Նոր Հոննոսեան լրագիրը»: Սա առաջինն էր, որ գործնականապէս ամենափայլուն կերպով ապացուցեց, թէ ինչպէս կարելի է, — կատարելապէս բաւականութիւն տալով ժամանակակից ժուրնալիստիկայի բոլոր պահանջներին, — արմատական և յեղափոխական ոգով գրել ամենօրեայ մի լրագրում: Թերթը յարձակուեմ էր դեմօկրատիայի վրայ միայն այն պարագայում, երբ սա յետադիմական էր, իսկ երբ նա յեղափոխական որևէ քայլ էր անում, թերթն պաշտպանում էր նրան: Այն դէպքում, երբ դեմօկրատիան լուծութիւն էր պահպանում, կամ դաւաճանում իր կոշմանը, թերթն հնթարկում էր նրան ամենաանողոր քննադատութեան: Այս պատճառով էլ նա ամենատեսելի լրագիրն էր ոչ միայն Բէլգիայի, այլև բուրժուական դեմօկրատիայի համար:

Թերթի հիմնւելուց յետոյ — լրագրի առաջին համարը լոյս էր տեսել 1848 թ. յունիսի 1-ին — շատ շուտով վրայ հասաւ այն մեծ կատաստրօֆը, որը յեղափոխութիւնը դէպի պարտութիւն տարեց. դա Փարիզի յունիսեան օրերն էին: Փարիզի բուրժուազիան լաւ էր հասկացել, թէ շահերի ինչ հակասութիւն կայ պրօլետարիատի և բուրժուազիայի միջև: Այն պահուն, երբ պրօլետարիատը դեռ ակնկալութիւններ ունէր բուրժուազիայից, բուրժուական ռամկավարական կառավարութիւնը շտապեց ուժեղաց-

նել գործը այնքան, որ սա կարող լինէր ձեռնել ամեն մի դիմագրութիւն: Եւ երբ այդ նպատակի համար զինուորական ուժերն արդէն բաւարար էին, պրօլետարիատը դուրս ելաւ իր սեփական ճանապարհներէ մէկն ընտրելու պահանջի առաջ՝ կամ հպատակել, կամ թէ չէ ընդունել ճակատամարտը: Կառավարութիւնն ուզում էր ամենալաւ յեղափոխական տարրերին աքսորել հեռաւոր գաւառները, որի պատճառով էլ բանւորներն ըստիպւած եղան զէնքի դիմել: Այդպիսով բռնակեց՝ բուրժուազիայի դաւաճանական պրօվօկացիայի դրօշմով, յունիսեան յեղափոխութեան մեծ կռիւն, երբ՝ հակառակ ջանքերից յետոյ, գործին վերջապէս յաջողեց ջարդել պրօլետարիատը, և երբ կատարուեցին չեղած ու անկարագրելի գաղանթութիւններ: Դրանից յետոյ ամենքին էլ պարզ դառաւ՝ երկու դասակարգերի՝ պրօլետարիատի և բուրժուազիայի միջև եղած վիճը, մի վիճ, որի վրայից—ինչպէս ապացուցել էր Կոմմունիստական Մանիֆեստը—անկարելի է կամուրջ գցել, բոլորին բացայայտ դառաւ, որ այդ երկու դասակարգերի մէջ այլևս հաշտութիւն չի կարող, որ առհասարակ ուրիշ ոչ մի բան չի կարող լինել, բացի անընդհատ կռից:

Ամենուրեք խոշոր բուրժուական անցաւ բէակցիայի կողմը, իսկ մանր-բուրժուական անյուսալի էր դառնում, նա սպառնեց իր ոյժը բէակցիայի դէմ, և այսպիսով բէակցիան ամեն տեղ յաղթանակեց: Ճիշտ է, մի քանի տեղերում, ինչպէս, օրինակ, Սակսօնիայում, Բադենում և Վիսթրիայում, ընդդիմադրութիւններ եղան, բայց բէակցիան անդիմադրելի թափով առաջ էր ընթանում, և նա շարժեց նաև «Նոր Հոնոստեան լրագիրը», որը փակեց 1849 թւին: Ընդդիմադրութիւն ցոյց տալ Քեօնում, ամրոցի մէջ—անհնար էր: Էնգելսը մարտնչում էր Բադենում, որտեղ այդ միջոցին ապստամբութիւն էր ծագել: Մարքսն ուղեւորեց Փարիզ, ուր սպասում էր պրօլետարիատի նոր ապստամբութիւն: Բայց յեղափոխութեան բախտն արդէն վճռւած էր: Պրուսացիները Բադենում յաղթանակեցին և յեղափոխականներն ըստիպւած եղան անցնել Զեցերիա: Ֆրանսիայում էլ բանը մինչև ապստամբութեան չը հասաւ, և Մարքսը դուրս ելաւ իր սեփական առաջ՝ կամ աքսորել Նորմանդիա, կամ թէ՛ չէ՛՝ հեռանալ Ֆրանսիայից: Նա գերադասեց վերջին ելքը և տեղափոխեց Անգլիա, որը

1850 թւականից դարձաւ նրա մշտնջենական բնակավայրը, և որտեղ նա ապրեց մինչև իր մահւան օրը:

Էնգելսն հետեւեց Մարքսին Ֆրանսիայից, և շուտով նրանից յետոյ Անգլիա տեղափոխեցին Կոմմունիստական Միութեան նաև մնացած անդամները: Ի հարկէ, իսկական մաքառողը, մարտիկն այդքան շուտ զէնքը վար չի դնում: Մանաւանդ որ ամենուրեք սպասում էին, թէ շուտով կրկին կը բռնկւի յեղափոխութիւնը: Բայց Մարքսն ու Էնգելսը խիստ գործունեայ բնաւորութեան տէր մարդիկ էին և չէին կարող ձեռները ծալել ու նստել, սպասելով յեղափոխութեան: 1850 թ. յունւար ամսում նրանք սկսեցին հրատարակել «Նոր Հոնոստեան լրագրի խրօնիքան» մինչև նոյեմբեր լոյս տեսան 6 համարներ, որոնց մէջ ներանք գնահատում ու քննադատում էին անցած կռիւն: Էնգելսը գետնում էր այնտեղ Բադենի դէպքերի քննադատական վերլուծութիւնը, իսկ Մարքսն յօդւածներ էր գրում Փարիզի յեղափոխութեան մասին, որոնց Էնգելսը յետոյ լոյս ընծայեց առանձին բրօշուրով՝ «Դասակարգային կռիւն Ֆրանսիայում» վերնագրով, իսկ յետագայում Մարքսը վերամշակելով ու լրացնելով այդ յօդւածները՝ հրատարակեց «Բրիւմերի 18-ը» խորագրով: «Նոր Հոնոստեան լրագրի խրօնիքան» նոյնպէս երկարակեաց չեղաւ: Նոյեմբերին՝ բաժանորդներ չունենալուն համար՝ նա ստիպւած եղաւ դադարել: Բուրժուական դեմօկրատիան բոյկոտ էր արել Մարքսի թերթին, որպէս վրէժ Մարքսի՝ «Նոր Հոնոստեան լրագրում», դեմօկրատիային անողոր ու խիստ քննադատելուն համար: Թերթի փակւելու միջոցին Կոմմունիստները Միութեան անդամների մէջ տարածայնութիւններ ծագեցին, որոնք Միութեան քայքայման պատճառ դառան: Մարքսն ու Էնգելսը եկել էին այն համոզմունքին, որ իզուր է այլևս յեղափոխութեան նոր բռնկմանը սպասել: Որքան տնտեսական պայմանները լաւանում էին, այնքան աւելի նրանք համոզւում էին, որ խաղաղ պայմաններում, երկար ժամանակով աշխատանք տանելուն պէտք է յարմարւել: Սակայն Կոմմունիստական Միութեան տնտեսական մեծ մասն այդ մասին լսել անգամ չէր կամենում: Ներանք չէին կարողանում հաշտւել այն մաքի հետ, թէ արւած բոլոր գոհաբերութիւններն իզուր են կորել: չէին կարողանում հանգիստ սրտով նայել, թէ ինչպէս բէակցիան վայրագաբար թաղաւորում է Գերմանիայում: Այդ պատճառով էլ Միութեան մի

շարք ամենանախագահական անդամներին և Մարքսի ու Էնգելսի մէջ Կոնֆ-
լիկտ տեղի ունեցաւ, և «Վիլլիխ-Շապպեր» ֆրակցիան այդ օր-
ւանից անջատուեց նրանցից: Բլանքիստական այդ «Վիլլիխ-Շապ-
պեր» ֆրակցիան մեծամասնութիւն էր կազմում Անգլիայում,
որտեղ և հիմնեց իր սեփական կենտրոնը. իսկ Գերմանիայում,
ընդհակառակը, իշխում էր Մարքսի ու Էնգելսի ուղղութիւնը, և
որովհետեւ այնտեղ նրանք էին մեծամասնութիւն կազմում, ուս-
տի և Մարքսն ու Էնգելսն իրենց կենտրոնը տեղափոխեցին Քեօն:
Բայց Գերմանիայում շատ շուտով գտնուեց Կոմմունիստական
Միութեան հետքը և իշխանութիւնը սկսեց հետամտել նրա ան-
դամներին: Ձերբակալուեց Կենտ. Կոմ. անդամ Նոտիւզը: Նրա
մօտ գտնուեցին թղթեր, որոնց օգնութեամբ կառավարութեանը
յաջողեց ձերբակալել ամբողջ Կենտ. Կոմիտէն. սրա դէմ դատ
բաց արին, բայց շնորհիւ գոյութիւն ունեցող օրէնքների, դա-
տապարտել նրան անկարելի էր:

Այդ առթիւ Մարքսը մի բրօշուր գրեց, և իւրաքանչիւրին,
ով գործ ունի ոստիկանութեան հետ, խորհուրդ եմ տալիս կար-
դալ այն. դա ժանդարմական ոստիկանութեան խայտառակու-
թեան յուշարձանն է: Այն ժամանակեայ բոլոր դատապարտեա-
ները, այժմ արդէն վաղուց մեռել են, նրանցից միայն մէկը մինչև
այսօր ապրում է—դա՝ ընկեր Լեաներն է, որը դատապարտւած էր
երեք տարւայ բերդարգելութեան: Նա ողջ ու առողջ է և առաջ-
ւան պէս արի ու արմատական. ապրելով Լօնդոնում, նա միշտ
ուրախանում է այն բոլոր նոր յաղթութիւններով, որ տանում են
նրա երիտասարդ ընկերները, և միշտ պատրաստ է բորբոքել
երիտասարդութիւնը՝ դէպի նոր մարտ, նոր կռիւներ:

Յեղափոխութեան ճնշմանը հետևեց և շարժման պարտու-
թիւնն ու կործանումը: Բանտորական շարժման այդ ընդարմա-
ցումն ամբողջ տասը տարի շարունակեց: Տնտեսական դարգացումն
արագ առաջ էր ընթանում: Կապիտալիզմը զարգանում էր, բայց
պրօլետարիատը չէր համարձակւում ձայն ու ծալտուն հանել և
տեղիցը շարժել: Մարքսն ու Էնգելսը ստիպւած էին ապրուստի
միջոցներ հայթայթելու մասին մտածել: Այն փոքր նիւթական
կարողութիւնը, որ ունէին Մարքսն ու իր կինը, արդէն վաղուց
գործադրւած էր յեղափոխական նպատակների համար: Նրանք
այժմ ամենածանր կարիքի մէջ էին գտնւում: Էնգելսը թէև հա-
րուստ հայր ունէր, բայց սա որդուն ոչինչ չէր տալիս, մինչև որ

«Էնգելսն» զրադւած էր յեղափոխական պրօպագանդայով: Վեր-
ջապէս Էնգելսը վճռեց մտնել հօր գործարանը: Այդ խիստ
լաւ էր նաև այն պատճառով, որ Էնգելսի ստացած առճիկն ոչ
միայն իր ապրուստի համար էր բաւականանում, այլև Մարքսի:
Եւ եթէ Մարքսը հնարաւորութիւն ունեցաւ նւիրել գիտական
գործունէութեան ու յեղափոխական պրօպագանդային, զրանով
նա, գլխաւորապէս, պարտական է իր սրտակից ընկերոջ՝ Էնգել-
սին: Առաջ, սակայն, Էնգելսն էլ ոչինչ չուներ և Մարքսը հարկա-
դրւած էր գերմանական թերթերի համար թղթակցութիւններ,
գիտական յօդւածներ գրել: Սակայն այստեղ երևան եկաւ՝
բուրժուական գեմօկրատիայի կողմից՝ Մարքսի դէմ յայտա-
բարւած բոյկոտը: Դեռ ոչ այնքան վաղ բուրժուական մամուլը
կոկորդիլոսեան արցունք էր թափում՝ սօցիալ-դեմօկրատների
անհամբերատարութեան մասին, որը կայանում էր նրանում, որ
Բերլինի բանւորները՝ իրենց լրագրի խմբագրութեան պատառ-
խանատու պաշտօնների համար՝ ուզում էին ըստ իրենց հայեցո-
ղութեան մարդիկ հրաւիրել: Բայց նոյն բուրժուական համբե-
րատարութեան մասին այլ հայեացք ունէր, երբ հարցը վերաբե-
րում էր Մարքսին: Չընայած այն բանին, որ այդ ժամանակ
դեռ ևս սօցիալ-դեմօկրատական կուսակցութիւն գոյութիւն չու-
նէր, և որ Մարքսը միայն անւանական կերպով էր պատկանում
այդ կուսակցութեանը. չը նայած, որ նա ուզում էր թերթերում
պետեղել միայն գիտական յօդւածներ, ասում ենք, չը նայած այդ
բոլորին, նրա յօդւածներն այնուամենայնիւ չէին ընդունւում:
Եւ եթէ Մարքսը միայն գերմանական գեմօկրատական թերթերի
համար գրէր, կրնի նա քաղցից պիտի մեռնէր: Նա գրում էր նաև
Նիւ-Եօրքի «Տրիբուն» թերթի համար, որը նրան ապրելու մի-
ջոցներ էր հայթայթում: «Տրիբուն»-ի հրատարակիչը գիմել էր
Ֆրէյլիգրատին, առաջարկելով աշխատակցել թերթին, բայց սա
ինչ-ինչ պատճառներով հրաժարւել էր և իր փոխարէն յանձնա-
րարել Մարքսին: 1861 թ. այդ թերթի համար Մարքսը գրեց մի
շարք փայլուն ու հետաքրքիր թղթակցութիւններ, որոնց մի մասը
յետոյ լոյս տեսաւ Գերմանիայում՝ «Յեղափոխութիւնն ու հակա-
յեղափոխութիւնը Գերմանիայում» վերնագրով, իսկ միւս մասը
հրատարակեց անգլիերէն լեզուով: Բայց նրա մի շարք խիստ
հետաքրքրական յօդւածները՝ Քրանսիական կայսրութեան մասին,
դեռ ևս չեն հրատարակւել: Իր մի քանի ուրիշ յօդւածները՝ տնտե-

սական հարցերի մասին, Մարքսը յետագայում վերաձևակեց իր Կապիտալ անունով հեղինակութեան մէջ. հեղինակութիւն, որը նրա ամբողջ կեանքի աշխատանքի արդիւնք է: Մարքսը պարագում էր Բրիտանական մուզէի մէջ, և այնտեղ նա այնքան հիմնաւոր կերպով ուսումնասիրեց քաղաքա-տնտեսութեան կլասիկական գրականութիւնը, որ ոչ-որ Մարքսից առաջ այդ անհիշէր կարողացել և, անշուշտ, նրանից յետոյ էլ այնքան հեշտ չէ այդ անելը: Ահա այդ ուսումնասիրութեան պտուղն է՝ Կապիտալը, որը լոյս տեսաւ 1867 թւին: Աւելի քիչ, քան Կոմմունիստական Մանիֆեստը, ես կարող եմ այստեղ կանգ առնել Կապիտալի վրայ: Իրան կարիք էլ չը կայ, որովհետեւ, ինչպէս ասացի, այդ գրքի հիմնական կէտերը դուք կարող էք կարդալ նրա «Վարձու աշխատանք և կապիտալ» բրոշլւրի մէջ: Միայն մի բան եմ ուզում նկատել: «Կապիտալի» մէջ Մարքսը մի այնպիսի չը լսած նոր տեսակէտով է պատկերացնում կապիտալիստական արտադրողութեան ու փոխանակութեան ամբողջ պրօցեսը, որ սկզբներում նրան նոյնիսկ չէին կարողանում հասկանալ: Այդ գրքով նա մեր ձեռքն այնպիսի գէնք է տալիս, որ ոչ մի տեղ, ոչ մի ժամանակ և ոչ մի պարագայում դեռ անպէտք չի հանդիսացել: Երբ Կոմմունիստական Մանիֆեստի մասին դեռ կարելի է ասել, որ նրա մի քանի կէտերը հնացել են, նոյնը չի կարելի կրկնել Կապիտալի վերաբերմամբ: Կապիտալը այժմ էլ գերազանցում է իր թարմութեամբն ու ժամանակակցութեամբը, ինչպէս և այն ժամանակ, և գուցէ այժմ աւելի, քան առաջ, նա կենսունակ է, որովհետեւ իրերի դրութիւնը զարգացաւ ճիշտ այնպէս, ինչպէս Մարքսն էր նախատեսել, իսկ պատմական զարգացման ամբողջ ընթացքը հաստատում է նրա եզրակացութիւններն ու հիմնական գրութիւնները: Սկզբներում բուրժուական գիտութիւնն աշխատում էր բոլորովին լուրջութեամբ անցնել Կապիտալի երևան գալը, որովհետեւ սա նրա համար խիստ անհաճոյ էր: Բայց պրօլետարիատին էլ հեշտ չէր հասկանալ այդ հեղինակութեան նշանակութիւնը, որովհետեւ դա բանւորների համար խիստ լուրջ ու խրթին մի գրեւոր էր, ուրեմն և շատ քչերին մատչելի: Միայն շատ դանդաղ կերպով այդ գրքի հետ ծանօթանալուց յետոյ, նա մեր կուսակցութեան լայն շրջաններում տարածեց: Նոյնիսկ ինտելլիգենտ բանւորները դժարութեամբ էին հասկանում Կապիտալը: Ես յիշում եմ, թէ ինչ էր ասում ինձ այդ մասին Մարքսը, թէ ինչպիսի յուսահա-

տութեան մէջ ընկաւ նա, երբ ստացաւ Լէյպցիգից Մօստի բրօշլւրի սրբագրական թերթերը, որտեղ վերջինս հանրամատչելի էր դարձնում Կապիտալը: Մարքսը ստիպւած էր բրօշլւրի մեծ մասը նորից ինքը վերակազմել և ուղղել, սակայն այնուամենայնիւ դեռ շատ անճիշտ, խեղաթիւրւած տեղեր մնացին այնտեղ, չը նայած, որ Մօստը կարգին ինտելլիգենտ ու խելացի բանւոր էր: Բայց Կապիտալն այնքան նոր էր և պահանջում էր փիլիսոփայական մի այնպիսի նախապատրաստութիւն, որ շատ քիչ բանւորներ կարող էին ըմբռնել նրան: Միայն կամաց-կամաց գտնեցին ժողովրդականացողներ, որոնք բանւոր դասակարգը ծանօթացրին այդ հեղինակութեան հետ, ստեղծելով մեր ժուրնալիստների—լրագրողների համար մի նոր գէնք, որի օգնութեամբ սրանք գիւրութեամբ կարող կը լինէին յետ մղել բուրժուական լրագրութեան յարձակումները: Դրա դէմ վերջիններիս հին տակ-տիկան այլևս դիմանալ չէր կարող, և հաճախ բուրժուական գիտութիւնը սկսեց յարձակել Կապիտալի վրայ: Դրեթէ չը կայ ոչ մի բուրժուական տնտեսագէտ, որ փորձած չը լինէր իր գիտնականութիւնը ցոյց տալ, Մարքսի վրայ յարձակելով: Ամբողջ գրադարաններով գրքեր են շարադրել նրա դէմ, անթիւ, անհամար անգամ նրան արդէն թաղել են, և որքան մեծ եռանդով նրանք այդ անում էին, այնքան և աւելի նա անմահ մնաց մեր մէջ: Բայց այդ բուրժուական գիտութիւնը մի և նոյն ժամանակ բաւական անազնութեամբ ընդօրինակում էր Մարքսից, առանց ճիշտ գիտութեան: Բուրժուական գիտնականները վերցնում էին այն ամենը, ինչի դէմ որ նրանք չէին կարող վիճել և օգտւում էին զբանից դարձնալ ընդդէմ մեր կուսակցութեան, ի հարկէ, աղջատելով ու խեղաթիւրելով ընդօրինակածի իմաստը: Եթէ բուրժուական քաղաքա-տնտեսական գիտութիւնն այժմ որևէ արժէք ունի, ապա դրանով նա պարտական է այն բոլորին, ինչ որ նա ընդօրինակել է Մարքսից, խարդախելով նրան և մի և նոյն ժամանակ յարձակելով նրա վրայ: Բուրժուական գիտութեան վերաբերմունքը դէպի Մարքսը նոյնն է և այժմ: Այդ գիտական արշաւանքի նախաձեռնութիւնն ընդդէմ Մարքսի, պատկանում է Լուի-Բրենտանօին, որը մինչև այսօր էլ համարւում է հեղինակաւոր և ցանկալի մի դէմք ոչ միայն բուրժուական աշխարհում, այլև բնիկիլիստներից ու պրօֆեսսորներին ղեկավարող ուսուցիչներից: Լուի-Բրենտանօն 1872 թւին ամենակոպիտ ձևով Մարքսին յայ-

տարբերեց խաբերայ ու ցիտատներ կեղծող: Այդ բանի համար նա առիթ ծառայեցրեց Ինտերնացիօնալի ողջունական հանդիսաւոր ուղերձը: Ինտերնացիօնալն այդ միջոցին մի այնպիսի հիմնարկութիւն էր, որն աւելի շատ, քան կապիտալը, բուրժուական դասակարգերի աչքին փուշ էր դառնել: Նրանք ամենամեծողական և կատաղի կերպով կուռում էին Ինտերնացիօնալի դէմ: Ահա այստեղ մենք մօտենում ենք Մարքսի վերջին մեծ ստեղծագործութեանը, բանւորների միջազգային միութեանը—Ինտերնացիօնալին:

Եւ այդ անւանեցի Մարքսի ստեղծագործութիւնը: Դա չի նշանակում, սակայն, որ Մարքսը ստեղծեց Ինտերնացիօնալը: Սա բնական անհրաժեշտութեամբ ծնւեց այն ժամանակայ իրերի դրութիւնից, այսինքն—պրօֆեսսիօնալ կուլից ըզրոյ պահանջներն էին, որ ստեղծեցին Ինտերնացիօնալը:

Դա 60-ական թւականների սկզբներին էր, երբ ամբողջ եւրօպայի վրայով փչեց ազատութեան հողմը, երբ լիբերալիզմը վերակենդանացաւ և պրօլետարիատը կրկին սկսեց կեանքի նշաններ ցոյց տալ: Անգլիայի պրօֆեսսիօնալ կազմակերպութիւնները սկսեցին արագ ծաղկել, բայց նրանք շարունակ խոչընդոտներ էին հանդիպում շտրայքերեխերների (գործաթողներին փոխարինող բանւորներ) կողմից, որոնց անգլիական կապիտալիստները բերել էին տալիս արտասահմանից ամեն անգամ, երբ Անգլիայում մեծ գործադուլ էր յայտարարւում: Ոչ մի յոյս չկար կանգնեցնել այդ հեղեղը—արգելել օտարերկրեայ բանւորների ազատ մուտքը Անգլիա: Բացի այդ, անգլիացի բանւորները բաւականին խելահաս մարդիկ էին, որպէսզի պաշտպան հանդիսանային մի այդպիսի յետադիմական օրէնսդրութեան: Նրանք շատ լաւ էին հասկացել, որ օտարերկրեայ շտրայքերեխերների մրցմանը դիմադրելու և հիմնական ու տեղական հետեանքների հասնելու համար՝ միմիայն մի միջոց կայ, այն է՝ ոչ թէ արգելել նրանց մուտքը, այլ հէնց այդ մրցակից-շտրայքերեխերներին դարձնել դաշնակից այն մեծ կուռում, որ մղւում էր նրանց սեփական հայրենիքում՝ ընդդէմ ընդհանուր թշնամու: Դրա համար անհրաժեշտ էր ստեղծել միջազգային մի կազմակերպութիւն, որը պրօֆեսսիօնալ կեանքի կազմակերպման և կուլի մեթօդը գործադրէր նաև արտասահմանում: Մի բան, որը համապատասխանում էր նաև օտարերկրեայ բանւորների պահանջներին: Անգլիական պրօֆեսսիօ-

նալ կազմակերպութիւնների յաջողութիւնները՝ Ֆրանսիայի, Բելգիայի, Ֆրանսիական Զւիցերիայի բանւորների մէջ՝ ուժեղ ցանկութիւն էին զարթեցնում, իրենց մօտ էլ այդպիսի կազմակերպութիւններ ստեղծել, և ահա զանազան երկրների բանւորները դիմում էին անգլիական պրօֆեսսիօնալ միութիւններին, իւրեք-բելով օգնել իրենց այդ գործում: Դադարեցնելու էին իր հերթին՝ անգլիական և օտարերկրեայ բանւորների մէջ՝ սերտ յարաբերութեան ստեղծմանը շատ նպաստեց: Անգլիայում բազմաթիւ գաղթականներ էին ապրում, որոնք ուշադրութեամբ դիտել էին անգլիական կարգերը, իւրացրել անգլիական մի քանի սովորութիւնները, վարք ու բարքը և ծանօթացել էին անգլիական բանւորների կենցաղի հետ: Նրանք վերադառնալով իրենց հայրենիքը, երբ այնտեղ ազատ շունչ քաշել կարելի էր դառնում, բերում էին իրենց հետ նաև անգլիական նոր հայեացքներ:

Մի քանի արտաքին դէպքեր նոյնպէս նպաստեցին այն բանին, որ աւելի ևս ամրապնդւեն այդ յարաբերութիւնները: Այդ դէպքերից մին՝ 1862 թւի համաշխարհային ցուցահանդէսն էր լծնդոնում, որտեղ եկած բազմաթիւ պատգամաւորների թւում, կային նաև բանւորներ՝ Ֆրանսիայից ու այլ երկրներից, որոնք ուսումնասիրեցին անգլիական բանւորական կազմակերպութիւնները և նրանց հետ մշտական յարաբերութիւններ հաստատեցին: Մի այդպիսի դէպք էլ լեհական ապստամբութիւնն էր, որի վրայ, դժախտորար, ժամանակի սղութեան պատճառով, երկար կանգ առնել չեմ կարող: Աւելորդ չէ, սակայն, նկատել, որ դեռ այն ժամանակներից բոլոր երկրների բանւորներն անհրաժեշտ էին գտնում կուռել ուստական ըէփիմի դէմ: Այն ժամանակ աւելի, քան այժմ, դա հանդիսանում էր միջազգային զեմօկրատիայի նպատակը, որովհետև 1849 թւին արդէն ուստական կառավարութիւնը՝ ընկեցիտայի ներգործութեամբ՝ դարձաւ մի բռնի ոյժ, որը խեղդեց յեղափոխութեան վերջին մնացորդները Վենգրիայում: Ռուսաստանում միակ տարրը, որ այն ժամանակաշրջանում ընդունակ էր կուռել ուստական կառավարութեան դէմ—դա լեհացիներն էին, և զարմանալու ոչինչ չը կայ, եթէ նրանք վայելում էին եւրօպայի ամբողջ պրօլետարիատի համակրանքը: 1862 թւին բռնկեց լեհական ապստամբութիւնը, որը ճնշեց 1863-ին ամենամոտոգորմ ձեռով: Իզուր պրօլետարիատը պահանջում էր բուրժուական կառավարութիւններից՝ պաշտպան հանդիսանալ Լե-

հաստանին: Կառավարութիւնները խուլ մնացին, և այդ պատ-
ճառով էլ ամենուրեք տեղի էին ունենում բողոքներ ու մանի-
ֆեստացիաներ, համակրական ցոյցերով դէպի լեհացիները: Ա-
ռանձնապէս դա աւելի ուժեղ էր արտայայտուում Անգլիայում,
որ բազմամարդ ժողովրդական միտինգներն աւելի դիւրութեամբ
էին թոյլատրուում, քան մի որևէ ուրիշ տեղ: Օտարերկրեայ
բանւորներն ուղեւորուում էին Անգլիա, որպէսզի մասնակցեն
միտինգներին, որտեղ արտայայտուում էին զայրոյթ ու բողոք-
ներ՝ ընդդէմ եւրոպական կառավարութիւններին նրա համար, որ
սրանք արգելք չէին հանդիսանում ուսական կառավարութեան՝
լեհացիների վրայ գործադրած բռնութիւններին: Բանւորների այդ
շփոթմանից էլ սկիզբ են առնում նրանց միջազգային յարաբերու-
թիւնները, որոնք յետագայում զրդիչը հանդիսացան՝ հիմնելու
բանւորների միջազգային ասօցիացիան (խմբակցութիւն), իր
կենտ. Կոմիտէով՝ Լոնդոնում: Մարքսը իսկոյն ըմբռնեց այդ
նոր կազմակերպութեանն նշանակութիւնը և մտաւ նրա մէջ,
որ նա կենտրոնական Կոմիտէի անդամ ընտրուէր: Նա էր, որ
այդ կազմակերպութեանն որոշակի նպատակներ առաջադրեց
ու կենտրոնացրեց նրա միջոցները որոշ կէտերի վրայ:

Նրա առաջադրած նպատակը, որ նա այդ Ժամանակն ու-
ղում էր իրագործել, արդէն պարզաբանւած էր Մանիֆեստում,
այն է՝ շարկապել և միացնել տնտեսական ու քաղաքական կոիւր:
Բայց դա այնքան էլ հեշտ բան չէր: Այդ միջոցին Անգլիայում դեռ
տիրապետում էր այն հոսանքը, որը միմիայն գուտ, բացարձակ
պրոֆեսսիօնալիզմի կողմնակից էր, Ֆրանսիայում գոյութիւն ու-
նէին պրուդօնիզմն ու բլանքիզմը, իսկ մնացած երկրներում դեռ
շարժումները շատ թոյլ էին: Մարքսն աշխատում էր, որպէսզի
վերացել այդ միակողմանիութիւնը, որպէսզի ամենուրեք մտցւի
պակասող տարրը, որպէսզի բանւորական շարժումը դրւած լինի
ժամանակակից տեսակէտի վրայ: Այդ նա էր, որ ուղղութիւն էր
տալիս պատգամաւորական ժողովներին, իր զեկուցումներով ու
ընդօրէցիաների նախագծերով. նա էր վարում կենտրոնական
Պորժուրդի գրազրութիւնները, մի խօսքով՝ նրա հոգին իշխում
էր ամբողջ Ինտերնացիօնալի մէջ: Եւ այդ ամենի արդասիքն ե-
ղաւ այն, որ արեւմտեան Եւրոպայի ամբողջ կուռ պրօլետարիատը
փաստօրէն կանգնեց միևնոյն—Կոմմունիստական Մանիֆեստի
տեսակէտի վրայ: Բայց բոլորն այդ ճանապարհով Ինտերնացիօ-

նալը մօտենում էր իր նպատակի իրագործմանը, այնքան աւելի
նա անարժէք էր դառնում, ուստի և նա աւելի ու աւելի պիտի
թեքէր դէպի անկում, պիտի վերջ ի վերջոյ դադարէր գոյու-
թիւն ունենալուց:

Ինչպէս ես արդէն շեշտեցի, Ինտերնացիօնալի գլխաւոր
նպատակն էր՝ ազիտացիա մղել, պրոֆեսսիօնալ հողի վրայ կազ-
մակերպելու համար: Այդ միջոցով Ինտերնացիօնալիզմն աւելի
հեշտութեամբ է իրագործուում: Պրոֆեսսիօնալ հողի վրայ կուռու-
ժամանակ, բանւորներն ամենուրեք ընդհարուում են միևնոյն
թշնամու հետ, և այդ վերջինի դէմ ամեն տեղ անհրաժեշտ են
միևնոյն ձևի կազմակերպութիւններ. այստեղ, նշանակում է, որոշ
չափով կազմակերպական ձևերի միատեսակութիւնն անհրաժեշտ,
նոյնիսկ ցանկալի է: Այս դէպքում, որեւէ միջազգային կազմա-
կերպութիւնն իրօք որ խիստ օգտակար է ու կարեւոր, և հէնց այդ
ձևի կազմակերպութեան գոյութեամբ կարելի էր ամենից շատ
գործնական արդիւնքներ ստանալ, առանց զբաղուիլ արգելք հան-
դիսանալու և խանգարելու առանձին երկրների շարժումներին:

Կատարելապէս այլ բնատրութիւն ունի քաղաքական կազ-
մակերպութիւնը: Այստեղ կապիտալը չէ մեր միակ թշնամին. մեր
գլխաւոր թշնամիներն են կառավարութիւններն ու բուրժուական
այլ և այլ կուսակցութիւնները: Բայց ունեւոր դասակարգերի
զանազան խաւերն ամեն տեղ միանման չեն. տարբեր երկրնե-
րում, իշխանութեան քաղաքական գէնքերը՝ սահմանադրութիւն-
ները, օրէնքները, պատմական տրագիցիանները նոյնպէս տար-
բեր են լինում, հետևապէս քաղաքական կոիւր զանազան երկրնե-
րում, պէտք է զանազան ձևեր ընդունի, հէնց որ քաղաքական
շարժումը զաղարի միմիայն գուտ պրօպագանդայի միջոցով
արտայայտել ու երևան գան և զարգանան այնպիսի կուսակ-
ցութիւններ, որոնք գործնականապէս ակախ մասնակցութիւն ու-
նեն իրենց երկրների քաղաքական կուռում: Այդպիսով, ինչքան Ին-
տերնացիօնալը մօտենում էր իր նպատակին, այնքան աւելի նրա
ազդեցութեամբ կազմակերպուում էին սօցիալիստական մեծ կու-
սակցութիւններ, այնքան աւելի այդ սօցիալիստական կուսակ-
ցութիւնները պէտք է զաղարէին Ինտերնացիօնալի Գործադիր Կո-
միտէն իրենց ղեկավար ունենալուց: Նրանք առհասարակ պիտի
դադարէին (կազմակերպական տեսակէտից) միջազգային լինելուց
և պիտի յարմարէին իւրաքանչիւր երկրի ազգային առանձնա-

լատիւնացիներին: Այդ պատճառով էլ այլևս անկարելի էր դառնում այդ բոլոր կուսակցութիւնների գործունէութիւնը զեկավարել մի կենտրոնից, և կազմակերպութեան միջազգային ձեւը չդիտարկում էր ձեռնները, խոչընդոտ էր հանդիսանում, որից պէտք էր ազատուել, եթէ այդ կուսակցութիւնները ցանկանում էին ազատ և ինքնուրոյն զարգանալ:

Ինտերնացիոնալի յաջողութիւնները այն հետեանքն ունեցան, որ նա ստիպւած էր լուծել ինքզինքը: Այդ լուծմանը նըպաստեցին մարքսիստական մտքի յաջողութիւնները նաև մի ուրիշ տեսակէտից: Մարքսն անգլիական բանւորների մէջ զգուհութիւն դարձեցրեց նմանապէս նրանով, որ տնտեսական կուլի հետ միասին առաջագրում էր նաև քաղաքական կուլի: Սկզբում անգլիական բանւորները լաւ վերաբերեցին զէպի քաղաքական ազդեցության: Ինտերնացիոնալի հիմնելու ժամանակամիջոցին նրանք ընտրողական իրաւունք ձեռք բերելու համար էին պայքարում: 1867 թւին, թէև ոչ-ընդհանուր, բայց գոնէ բանւորական արիստօկրատիան ստացաւ այդ իրաւունքը: Սրանից աւելին նրանց հարկաւոր էլ չէր, միայն թէ իրենք՝ պրօֆեսսիօնալ-կազմակերպւածներն օգտուեն ընտրողական իրաւունքից, իսկ թէ պրօլետարական ընդարձակ մասսաներն ունենան այդ իրաւունքը, թէ՛ ոչ—դա նրանց իսկի էլ չէր հետաքրքրում: Եւ ահա այդ օրւանից պրօֆեսսիօնալ—արհեստակցական բիւրօկրատիան սկսեց պարլամենտարիզմով զբաղւել: Նրանք պարլամենտի համար թեկնածուներ էին առաջարկում, որոնք և ընտրւում էին: Բայց վերջիններն իրենց յետևից ունէին քաղաքականապէս անկազմակերպ ու անգիտակից բանւորական մասսա, և այդ պատճառով էլ մինչև այնտեղ հասցրին, որ սկսեցին լիբերալներին հաճոյանալ ու վաճառել նրանց: Նշւոնցից ոմանք պարզապէս կաշառւում էին փողով, հասոյթաւոր կամ պատուաւոր պաշտօններով, իսկ ուրիշները՝ թէև աւելի ազնիւ, բայց և աւելի տիմարներ էին. նրանք ընկնում էին լիբերալների լարած թակարդների մէջ, միամտաբար հաւատացած լինելով, որ կը յաջողի պրօլետարիատի համար մի բան անել, եթէ իրենք—բանւոր պատգամաւորները—լիբերալների հետ ձեռք-ձեռքի տւած գործեն: Որքան աւելի զարգանում էր այդ ձգտումը, այնքան աւելի՝ պրօֆեսսիօնալ բիւրօկրատիայի համար՝ մարքսիզմի տիրապետութիւնն Ինտերնացիոնալի մէջ դառնում էր անախորժ ու անցանկալի, և ահա նրանք զգուհութիւններ են

սկսում յարուցանել սրա դէմ: Այդ խնդրում նրանք դաշնակիցներ ունեցան բոմանական երկրներից, Պրուսիսիաներից ու սըրանց հետևողներից, որոնց բանակն էին անցել նաև Ինտերնացիոնալից հեռացածներից շատերը: Ինտերնացիոնալի գործունէութեան առաջին օրերում, սրանք պրօֆեսսիօնալ կուլի մասին անգամ լսել չէին կամենում: Յետոյ միայն նրանք համաձայնեցին, որ գործադուլը և պրօֆեսսիօնալ կազմակերպութիւնները լէսեն մի տեսակ օժանդակիչ միջոցներ՝ կարիքի դէպքում, իսկ իրենց գլխաւոր նպատակը նրանք համարում էին կօօպերացիան: Քաղաքական կուլին այնուամենայնիւ նրանց համար ատելի մնաց, և որքան շատ Մարքսը պնդում էր բանւոր դասակարգի քաղաքական կազմակերպութեան անհրաժեշտութեան վրայ, այնքան տւելի սրանք մարքսիզմից թեքւում էին զէպի հակառակ կողմը: Բոլոր այդ հակասութիւններն աւելի սուր բնաւորութիւն ստացան 1871 թւին, Փարիզի Կօմմունայի պարտութիւն կրելու պատճառով: Կօմմունայի ապստամբութեան նախաձեռնութիւնը Ինտերնացիոնալին չէր պատկանում, այլ,—ինչպէս յունիսեան յեղափոխութիւնը,—դա ևս հետեանք էր իշխանութեան գլուխը կանգնած բուրժուազիայի դաւաճանական պրօփօկացիայի: Տիէրը հարկադրեց պրօլետարիատին՝ կամ ապստամբել, կամ թէ չէ՝ առանց կուլի անձնատուր լինել և ենթարկւել բուրժուազիայի մըտրակին: Բայց չը նայած, որ Կօմմունայի ապստամբութեան հեղինակն Ինտերնացիոնալը չէր, նա, սակայն, ամենահեռանդուն կերպով կուլի դաշտը նետեց, երբ սա արդէն բռնկւել էր: Մարքսն ամեն ճիշդ ու ջանք գործադրեց, որպէս զի արտասահմանեան հասարակական կարծիքը զբաւէ յօգուտ Կօմմունայի և համոզէ միջազգային պրօլետարիատը, որ սրա պարտականութիւնն է՝ գոնէ բարոյապէս՝ աջակցել Կօմմունային: Նա՝ Ինտերնացիոնալի կենտրոնական Խորհուրդի անունից՝ տաղանդաւոր և հրաշալի կոչիւր շարադրեց, որտեղ պաշտպանում էր Կօմմունային՝ բուրժուական մամուլի կատաղի յարձակումներից ու վայնասունից: Բայց Կօմմունան, մայիսեան արիւնշաղախ օրերում, պարտութիւն կրեց, և ահա ամբողջ բուրժուական հասարակութիւնը իր բոլոր ատելութիւնն ու ոխը թափեց նրանց գլխին, որոնք Կօմմունայի առաջ-մղիչ ոյժն էին կազմում. սկսւեց ընդհանուր հալածանք Ինտերնացիոնալի և նրա ղեկավար՝ Մարքսի դէմ: Այդ ժամանակ էլ անգլիական պրօֆեսսիօնալ կազմակերպու-

Թիւնները յարմար առիթ համարեցին՝ հեռանալու Մարքսից։ Միւս կողմից՝ Կոմունայի պարտութիւնը մի դժբախտութիւն էր, որն առանձնապէս զգալի դառաւ բոմանական երկրների համար։ Ֆրանսիական պրօլետարիատը որպէս օրինակ էր ծառայում Բէլգիայի, Զւիցերիայի, Սպանիայի և Իտալիայի շարժումների համար։ Այդ երկրներում բանւորական շարժմանը մասնակցում էին զլխաւորապէս երիտասարդ ու անփորձ տարրերը, և երբ շարժումը Փարիզում պարտւեց ու ջախջախեց, սրանք՝ մնալով անօգնական ու զրկելով իրենց ղեկավարներից, ընկնում էին առաջին պատանող առաջնորդների ազդեցութեան տակ, որոնք այդ ժամանակ առաջ էին գալիս «վայրենիներ» դառած ակադեմիկներին, կամ մանր-բուրժուազիայի շարքերից։ Իսկ սրանք չափազանց հակած էին դէպի Բակունինի քարոզած անարխիզմը։ Այդպիսով բոմանական երկրների պրօլետարիատը ևս պոկեց Մարքսիստական Կոմունայից և գրանից յետոյ Ինտերնացիոնալի բախտն արդէն վճռւած էր։ Բայց և այնպէս Մարքսին յաջողեց համագումար հրաւիրել, որտեղ մեծամասնութիւն էին կազմում նրա կողմնակիցները։ Դա Հաագայի կոնգրեսն էր, որտեղ Բակունին վճռեց Ինտերնացիոնալից, բայց այդ ժամանակից արդէն Ինտերնացիոնալը գնում էր դէպի անկումը։

Գերմանիայում Ինտերնացիոնալն երբէք հաստատ ու ամուր հող չի ունեցել իր ոտների տակ։ Միութիւնների մասին եղած օրէնքներն ինքնին բաւական էին, որ անհնար դարձնէին Ինտերնացիոնալի այնտեղ ազատ գործելը։ Նա միայն առանձին, անհատ անդամներ ունէր, իսկ մասսայական կազմակերպութիւն զառնալ չէր կարող։ Բայց դրան աւելացաւ նաև մի ուրիշ հանգամանք։ Բանը նրանում է, որ Գերմանիայում աւելի ուժեղ, քան մի որևէ այլ տեղ, զարգացաւ քաղաքական կուսակցութիւնը, և դա առաջին սօցիալիստական կուսակցութիւնն էր, որն այնքան հզօրացաւ, որ այլևս չէր կարող կառավարել Անգլիայից։ Սրանով մի անգամ ևս հաստատուում էր այն փաստը, որ նոյնիսկ այնտեղ, ուր մարքսիզմի իդէաները տարածւում ու ծաղկում էին, Ինտերնացիոնալը հետզհետէ մահանում էր։

Նրա այդ մահացումն յանկարծակի չեղաւ, այլ դանդաղ կամաց-կամաց։ Ես ինքս դեռ 1880 թւին հնարաւորութիւն ունեցայ Յիւրիխում պատահել Իտերնացիոնալի մի սեկցիային և անդամագրել այնտեղ, բայց, մի տարուց յետոյ, նա նոյնպէս լուծ-

ւեց։ Որքան ինձ յայտնի է, այդ սեկցիան վերջինն էր. Ինտերնացիոնալը, որպէս մի իրական ոյժ, դեռ 70-ական թւականների կիսերին գոյութիւն ունենալուց դադարել էր։ Բայց Ինտերնացիոնալն անհետացաւ ոչ նրա համար, որ նա իսպառ ջախջախւած էր։ Ո՛չ, նա անհետ չի խորտակւել, նա գոյութիւն ունենալուց դադարեց, որպէս շարժման մի որոշ ձև, որն արդէն իրագործել էր իր նպատակը, տեղի տալով շարժման մի ուրիշ, աւելի բարձր ու համապատասխան ձևին—սօցիալիստական ուժեղ կուսակցութիւններին, որոնք անկարևոր ու անպէտք կը լինէին, եթէ Ինտերնացիոնալը նրանց համար հող պատրաստած չը լինէր։


Ինտերնացիոնալի լուծումից յետոյ, պէտք էր սպասել, որ Մարքսը դարձեալ կը զբաղւի իր գիտական գործունէութեամբ։ Ինտերնացիոնալը խլում էր նրա ամբողջ ոյժերը, և այնօրից, երբ սա այլևս չէր զարգանում, և երբ նրա Կենտրոնական Խորհուրդը տեղափոխեց Ամերիկա, Մարքսը յոյս ունէր, որ այժմ ինքը կարող կը լինի զբաղւել գիտական գործունէութեամբ։ Բայց նա սխալւում էր։ Ինտերնացիոնալը շարունակեց նոր ձևերով գոյութիւն ունենալ, և Խորհուրդի լուծւելուց յետոյ էլ Մարքսի նշանակութիւնը չը պակասեց, այլ ընդհակառակը, նա շարունակում էր լինել միջազգային պրօլետարիատի առաջնորդն ու ղեկավարը։ Ամբողջ աշխարհի բոլոր սօցիալիստական կուսակցութիւնների ղեկավարող տարրերը դիմում էին նրան, զանազան խորհուրդներ հարցնելով, և նա հարկադրւած էր հետեւի բոլոր սօցիալիստական կուսակցութիւնների գործունէութեանը,—որոնց քանակն ու նշանակութիւնը անդադար աճում էր,—նամակագրութիւն ունենալ կուսակցական բոլոր յայտնի ընկերների հետ, իսկ այդ ամենը պահանջում էին նրանից նոյնքան ժամանակ և եռանդի սպառումը, որքան սուաջ, Ինտերնացիոնալի օրով։ Բացի այդ, նրա աշխատանքները սկսել էր արագութեամբ նւազել։ Նա ուղղակի մի Հերբուլէսեան ոյժի տէր էր, որը շատ բշերին է բաժին ընկնում, և միայն դրա շնորհիւ էր, որ նա կարողանում էր կատարել այդպիսի հսկայական հասարակ, մահականացուների ոյժերից վեր, աշխատանք։ Սակայն այդ նրա առողջութեան համար անպատիժ չանցաւ։ Դեռ 60-ական թւականների կիսերին նա սկսեց տանջւել լեարդի ու ստամոքսի հիւանդութիւնով։ Մարմնի վրայ դուրս էին գալիս արիւնալից խոցեր, որոնք ամբողջ շաբաթներով ու ամիսներով նրան աշխա-

տանքի անընդունակ էին դարձնում: 70-ական թվականների վերջերում այդ հիւանդութիւնը գնալով՝ աւելի լուրջ էր դառնում: Նրա արտաքին տեսքից, սակայն, ոչինչ չէր կարելի նկատել: Ես նրա հետ ձանձութացայ 1881 թվ. դարնանը և հիացայ նրա առողջ ու առողջ տեսքով: Բայց էնգելսն ասաց, որ Մարքսը սաստիկ տանջւում է հիւանդութիւնից, և նա արդէն սկսել էր խիստ մտատանջւել ու անհանգստանալ իր մտերիմ ընկերոջ կեսնքի մասին: 1881 թ. նոյեմբերին վախճանեց Մարքի սիրեցեալ կինը, որի հետ նա ապրել էր ամբողջ 40 տարի: Երբ էնգելսը Մարքսի կնոջ մահւան լուրն իմացաւ, բացականչեց. «Այժմ արդէն պէտք է մեռած համարել և մեր արապին» (իբար մէջ Մարքսին այդ անունով էին կոչում): Իսկապէս, Մարքսը, իրեն հասած այդ ծանր հարւածից յետոյ, այլևս չը կարողացաւ կազդուրուել, ոտքի կանգնել: Նա ստացաւ թոքերի լուրջ հիւանդութիւն և բժշկւում էր Ալթիրայում, Րիվիէրում, Ֆրանսիական Զւիցերիայում: Բայց ոչինչ չէր օգնում: Նա ուղեւորեց հարաւային Անգլիա, Ուայտ կղզին, բայց այնտեղ էլ նրա առողջութիւնը չը կազդուրեց: Ահա այդ դրութեան մէջ էր նա, երբ 1883-ի յունւարին իմացաւ իր մեծ, սիրեցեալ աղջկայ, Եւգենիի մահը, որ առաջացել էր ծննդաբերութիւնից: Դրանից յետոյ նա այլևս չը կարողացաւ օտարութեան մէջ մնալ և շտապեց Լոնդոն, դէպ իր տունը, իր աշխատանքի կարինետը, բայց դա վերջնականապէս կործանեց նրան: 1883 թ. մարտի 14-ին նրան անշնչացած գտան իր կաբինետում, գրասեղանի առաջ, բազկաթոռի մէջ նստած, ուր նա ձեւակերպել էր այնքան խորն ու բեղմնաւոր մտքեր: Նա մեռել էր, շրջապատւած իր գրքերով, որոնցից նա այնքան հարուստ գանձեր էր հանել, և որոնց հարուստ պտուղները վայելում ենք այժմ մենք:

Նրա մահւան բոթն ամենախոր վիշտ ու ցաւ պատճառեց ոչ միայն իր մտերիմ բարեկամներին, այլ ամբողջ միջազգային սօցիալ-դեմոկրատիային: Մարքսի մահւանից յետոյ սրանց պատել էր յուզմունքն ու երկիւղը, և տանջում էր այն միտքը, թէ քանի որ այլևս մեր շարքերում չը կայ այդ մեծ, խորագէտ մտածողը, չի՞ կորցնի արդեօք շարժումն իր ոյժն ու հաւատը՝ իր նպատակներին հասնելու վերաբերմամբ: Աւելի շատ այդ սպասում էին Վեր թշնամիները, որոնք կարծում էին, թէ մեզ միացնում, շաղկապում էր Մարքսի հսկայական դէմքը. նրանք այժմ հրճւում ու ցնծում էին: Ինչպէս բոլորիդ յայտնի է, ոչ մեր բարեկամները

երկիւղն արդարացաւ, և ոչ էլ մեր թշնամիների յոյսերը: Ընդհակառակը, Մարքսի մահւանից յետոյ մեր շարժումն առաջանից աւելի ուժեղացաւ, և այդ հէնց նրա համար, որ նա շարունակում էր յենւել միևնոյն հիմնական սկզբունքների, աշխարհայեացքի վրայ, որ ստեղծել էր Մարքսը. և ղեկավարելով դրանցով, նա աւելի արագ, քան առաջ, յաղթական քայլերով առաջ է ընթանում: Մարքսը մեռաւ, բայց նրա իդէաները կենդանի են մեր մէջ և շարունակ դորեղանում են: Նրանք արդէն արմատներ են գցել ու ամենափայլուն գործնական արդիւնքներ տւել, որովհետև նրանք աւելի լաւ քան որևէ այլ թէօրիաներ, հնարաւոր դարձրին աւելի խորն ըմբռնել ժամանակակից հասարակարգի էութիւնը, և դրանով էլ հէնց կարելիութիւն տւին մեզ՝ աւելի ուղիղ ու համապատասխան միջոցներով կուել հասարակական այդ կարգերի դէմ, աշխատելով փոխարինել դրանց ուրիշ, լաւագոյն կարգերով: Պրակտիկան, գործնական կեանքը մեզ ցոյց տւեց, որ ընթանալով Մարքսի ընդգծած, մատնանշած ճանապարհով, մենք անսայթաք, աւելի ճշգրիտ կերպով ու աւելի շուտ կը հասնենք մեր նպատակին—յաղթանակին: Ահա այդ իմաստով Մարքսը դեռ ողջ է: Նա ապրում է մեր մէջ, ինչպէս մեր դրօշակակիրը. հետեւելով այդ դրօշակին ու գործելով նրա ոգով, մենք կը քայլենք ամենաուղիղ ճանապարհով, որը պրօլետարիատի ազատագրման համար մղւած կռիւը պիտի պսակի պանծալի յաղթանակով:





հիմ. Բ

ՀՀ Ազգային գրադարան



NL0180374

